

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՍՅՈՒՆԻՔԻ XVIII ԴԱՐԻ ԱԶԱՏԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋՐ

Պրոֆ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Դավիթ բեկի գլխավորած Սյունիքի ժողովրդա-ազատագրական շարժումը հայ ժողովրդի ազատագրական մաքառումների պատմության հերոսական դրվագներից մեկն է։ Քաջարի սյունեցիները 1722 թ. ոտքի կանգնեցին իրենց հարստահարիչների դեմ, տապալեցին օսարերկրյա տիրակալների արյունոտ լուծը և անհավասար կռվի մեջ մտան սկզբում խանական, իսկ հետո՝ թուրքական կազմակերպված բանակների դեմ՝ ցուցադրելով անօրինակ սխրագործություններ։ Անհիմն չէ լեռն, երբ խոսելով Սյունիքի ազատագրական շարժումների նշանակության մասին և խոսքը մասնավորելով Դավիթ բեկի վրա, գրում է. «Դավիթ բեկը... հայոց պատմության մեջ... իբրև ազգային ազատության մարմնացում՝ շուներ իջր նմանը Կիլիկիայի հայոց անկախության խորտակումից հետո»¹։

Լրանում է Սյունիքի ազատագրական շարժման 250-ամյակը։ Սակայն ցավով պիտի նշել, որ այս շարժման բաղմամբիվ հարցեր դեռևս մնում են չլուսաբանված։ Ցանկանալով այդ գործում փոքր-ինչ օգտակար լինել, ներկա հոդվածով նպատակ ունենք անդրադառնալ մի քանի վիճելի հարցերի։

* * *

Մինչև վերջին ժամանակները Սյունիքի ազատագրական շարժումների միակ աղբյուրը համարվում էր «Ընտիր պատմութիւն Դաւիթ բէգին, և պատե-րաշմաց Հայոցն Խափանու, որք եղեն քնդդէմ Թուրքաց ի մերում ժամանակի. այն է յամի տեառն 1722 և Հայոց 1171» աշխատությունը, որը հրատարակել է Աբդ. Գյւլամիրյանցը Վաղարշապատում 1871 թ.։ Այդ աշխատությունը ֆրանսերեն է թարգմանել և հրատարակել ակադ. Բրոսսեն Պետերբուրգում 1876 թ. «Collection d'historiens arméniens» ժողովածուի երկրորդ հատորում (էջ 223—255)։ Ըստ տեղեկությունների, «Ընտիր պատմութիւնը» գրի է առել Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ղուկաս վարդապետ Սեբաստացին Սյունիքի ազատագրական շարժումների անմիջական մասնակից, Դավիթ բեկի ղորահրամանատար Ստեփանոս Շահումյանցի հաղորդած տեղեկությունների հիման վրա։

Գյուլամիրյանցի հրատարակած այս բնագիրն է հիմք ծառայել Սյունիքի ազատագրական շարժումների պատմության ուսումնասիրությամբ ղբաղվող բոլոր գիտնականների համար (Ղ. Ալիշան, Լեռ, Ա. Հովհաննիսյան, Ա. Միր-

¹ Լեռ, Հայոց պատմություն, հատ. 3, Երևան, 1946, էջ 695։

զոյան, Պ. Հարությունյան, Հ. Կնյազյան և ուրիշներ)։ Այս սկզբնաղբյուրից են տեղեկություններ քաղել Բաֆֆին՝ «Դավիթ բեկ» և Ս. Խանդադյանը՝ «Մխիթար Սպարապետ» պատմական վեպերի համար։

«Ջնտիր պատմութիւն Դաւիթ բէգին» աշխատության մեջ, սակայն, նկատվում են պատմական իրադարձությունների խառնաշփոթություն, ժամանակագրական անախրոնիզմներ, չափազանցություններ և այլն, ուստի նրա հիման վրա դժվար է անսխալ վերականգնել Սյունիքի աղատագրական շարժումների ձիշտ և ամբողջական պատկերը։ Իրավացի է պրոֆ. Ն. Ադոնցը, երբ գրում է. «Ջնտիրը» բավականին խառնակ է... շատ բան շփոթել է, չափազանցել՝ խախտելով սյուժեն»²։

«Ջնտիր պատմութիւնը» այժմ հայտնի է հետևյալ ձեռագիր ընդօրինակություններով.

Ա) Գյուլամիրյանցի հրատարակած բնագրի ձեռագիր ընդօրինակությունը, որը գտնվում է հանգուցյալ ակագ. Ա. Հովհաննիսյանի անձնական արխիվում³։ Ձեռագրի գրչության թվականի և գրչի անձնավորության մասին անհրաժեշտ տեղեկություններ պակասում են։

Բ) Լենինգրադի արևելյան ինստիտուտի B—129 թվահամարը կրող ձեռագիրը, որն ընդօրինակել է Հովակիմ Սաֆայելիսան Ղափանեցին 1759 թ. Ամստերդամ քաղաքում։ Ձեռագրի միկրոֆիլմը ստացվել է և պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում։

Գ) Բահաթրյանի անունով հայագիտության մեջ հայտնի ձեռագիրը, որն այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում և գրանցված է № 4598 թվահամարի տակ։ Ձեռագիրն ընդօրինակված է Հովհաննես Ամասացու կողմից 1759 թ. Ամստերդամ քաղաքում։

Դ) Մաշտոցի անվան Մատենադարանի № 6835 ձեռագիրը «Գիրք որ կոչի Պատմութիւն Դաւիթ բեկին և պատերազմացն Հայոց, որ եղեն ընդդէմ Թուրքաց և մերում ժամանակի» վերնագրով (թ. 1ա—20ա)։ Գրիչը հայտնի չէ։ Դրչությունը XIX դարի է։

Ե) Մաշտոցի անվան Մատենադարանի № 3297 ձեռագիրը (թ. 138ա—170ա)։ Սկզբից թերի է, սկսվում է հրատարակության 25-րդ էջից՝ «Եւ իբրև զայն զգայր, վաղվաղակի հրովարտակս առաքէր...» նախադասությամբ։ Ձեռագիրն ընդօրինակել է Ծսայի գրիչը 1847 թ. էջմիածնում⁴։

Զ) Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի № 620 B ձեռագիրը «Պատմութիւն Ղափանցոց» վերնագրով, որը տվյալ աշխատության հնագույն օրինակներից է։

Ի՞նչ սպասելիքներ ունենք «Ջնտիր պատմութեան» այս ձեռագիր ընդօրինակություններից, նրանք արդյոք Սյունիքի շարժման մասին աչքի ընկնող նո-

² Ն. Ադոնց, «Դավիթ բեկ» վեպի պատմական հիմք և գաղափարական արժեքը (տե՛ս «Բաֆֆի»։ Ժողովածու՝ նվիրված ծննդյան հարյուրամյակին), Փարիզ, 1937, էջ 129։

³ Տե՛ս այս մասին Ա. Դ. Հովհաննիսյան, Դավիթ բեկի ղիսավորած Ղափանի ապստամբությունը, «Բանբեր նրեանի համալսարանի», 1970, № 1, էջ 96—111։

⁴ Այս ձեռագիրը նկարագրել է Ա. Ղյուճյանը իր «Նյութեր Դավիթ-Բեկի պատմության վերաբերյալ» հոդվածում (տե՛ս «Արարատ», 1905, էջ 382—387)։

ընթացություններ տալիս են, մեզ հայտնի փաստերի վրա արդյոք կատարում են էական լրացումներ և ճշտումներ: Այս հարցի լուսաբանությամբ զբաղվել է բանասեր Ե. Փեչիկյանը: Նա Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի «Ընտիր պատմութեան» ձեռագրի տասը հատված համեմատության մեջ է դրել հրատարակված բնագրի համապատասխան հատվածների հետ և եկել այն եզրակացության, որ նրանք էապես չեն տարբերվում իրարից և «...ընթերցողն ինքնին վստահորեն պիտի հաստատէ,— գրել է նա,— թե անկասկած վենետիկյան ձեռագրի մեկ օրինակն է Գյուլամիրյանի ձեռքն ընկած պատմական դրվածքը»⁵: Զեռագիր ընդօրինակությունների մեր կատարած համեմատական ուսումնասիրությունը ևս մեզ համոզել է. նրանք առանձնապես չեն տարբերվում իրարից և մեծ սպասելիքներ չենք կարող ունենալ:

Փեչիկյանը նշված հոդվածում հրապարակել է սենսացիոն մի տեղեկություն, որ «Ընտիր պատմութեան» հայտնի և հայագիտության մեջ քաղաքացիություն ստացած բնագիրը ոչ թե Ղուկաս Սեբաստացու նախնական գրվածքն է, այլ նրա հետագայի խմբագրված օրինակը: Նա հայտնել է նաև, որ Սեբաստացու նախնական բնագիրը հասել է մեզ և այժմ պահվում է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում A—620 թվահամարի տակ: Նորահայտ այդ աշխատությունը վերնագրված է. «Պատմութիւն Ղափանցոց ի գրուածոց հօրն Ղուկաս: Սեբաստացու»⁶:

Եվ այսպես, պարզվում է, որ Սյունիքի ազատագրական շարժումների համար հիմք ծառայող սկզբնաղբյուրը հանդիսացել է խմբագրված բնագիր: Հայտնաբերված է այժմ Ղուկաս Սեբաստացու նախագաղափար (պրոտոգրաֆ) օրինակը, որը հնարավորություն է ընձեռում որոշ իրադարձությունների նոր լուսաբանություն տալ:

Սյունիքի ազատագրական շարժումների վերաբերյալ մյուս աղբյուրներից իրենց հավաստիությամբ աչքի են ընկնում ցարական արխիվներում պահված վավերագրերը: Պարզվում է, որ ռուսական արքունիքը ուշի-ուշով հետևել է Հայաստանում տեղի ունեցող շարժումներին և տեղեկություններ է հավաքել այդ մասին: Այդ կարգի նյութերը կարևոր են ոչ միայն իրենց պարունակած փաստական տեղեկություններով, այլև նրանով, որ հնարավորություն են տալիս ստուգելու «Ընտիր պատմութեան» մեջ հաղորդվող տեղեկությունների հավաստիությունը:

Սյունիքի ազատագրական շարժումների օժանդակ այդ աղբյուրներից կարելի է մատնացույց անել հետևյալները:

ա. Զաքարիա նկարչի ձեռագրի հիշատակարանը, որը հայտնաբերել և հրատարակել է Մեսրոպ արքեպիսկոպոս Մագիստրոսը: Հիշատակարանում արժեքավոր տեղեկություն կա Դավիթ բեկի անձնավորության և պատերազմում զոհվելու մասին⁷:

5 Ե. Փեչիկյան, «Դավիթ բեկի» պատմական աղբյուրները և Մխիթարյանք, «Բազմավեպ», 1938, էջ 182:

6 Սեբաստացու այս ձեռագիրն այսուհետև հղվելու է պայմանական A տառանիշով, իսկ նույն մատենադարանի հրատարակված խմբին պատկանող հին ձեռագիրը՝ B տառանիշով:

7 Մեսրոպ արքեպիսկոպոս, Զաքարիա նկարչի ձեռագիրը և Դավիթ բեկի մասին հիշատակարանը (տե՛ս «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա և Բ, 1921—1922, էջ 127—137):

բ. Լիմ անապատի միաբան Մխիթար արեղայի հիշատակարանը, որը հրատարակվել է 1918 թ. «Աշխատանք» թերթում և ակադ. Մ. Գ. Ներսիսյանի կողմից վերահրատարակվել է 1941 թ. «Դավիթ-Քեկի շարժման արձագանքները Վասպուրականում և հարևան դավառներում» խորագրով⁸։

գ. Գ. Խուբովի «Հայ իշխանները և նրանց ժամանակագրությունը Կիլիկյան անկումից հետո» աշխատությունը, որը հրատարակել է պրոֆ. Լ. Մելիք-սեթ-բեկը «Գևորգ Մելիքսեդեկյան Խուբով» խորագրով աշխատության մեջ⁹ (պարզված է, որ Խուբովի հաղորդած տեղեկությունները վերցված են Մ. Չամչյանի «Պատմություն Հայոց» գրքից)։

դ. Կաբրիել քահանա Պատկանյանի «Հարյուրամյակ նոր-նախիջևանի հայաբնակ քաղաքի» աշխատության մեջ հաղորդվող տեղեկությունը Ղրիմի հայերի՝ սյունեցիներին ցույց տված զինական օգնության մասին¹⁰։

ե. Եվ, վերջապես, Պյոտր I-ի պատվիրակ Իվան Կարապետի և ժամանակակից այլ հեղինակների ուսական արքունիքին հաղորդած տեղեկությունները, որոնք հայտնաբերվել են վերջին տասնամյակում Մոսկվայի մի քանի արխիվներում և Մաշտոցի անվան Մատենադարանում¹¹։

Ասել, թե թվարկված նյութերը մեզ հնարավորություն են տալիս խորը թափանցելու Սյունիքի ազատագրական շարժման մեջ և լայն պատկերացում կազմելու տեղի ունեցող իրադարձությունների մասին, դժվարանում ենք։

Բոլոր դեպքերում, Սյունիքի ազատագրական շարժումների պատմությունը բազմակողմանի և ճշմարտացի ներկայացնելու համար անհրաժեշտ է դիմել ո՛չ թե Գյուլամիրյանցի հրատարակած «Ընտիր պատմութեանը», որը հետագայի խմբագրված բնագիր է, այլ՝ Սեբաստացու նորահայտ ինքնագիր բնագրին, վերջինիս պարունակած տեղեկությունները զուգադրել մյուս աղբյուրների տեղեկություններին և այդ բոլոր նյութերի համակողմանի ուսումնասիրության հիման վրա կազմել Սյունիքի հերոսամարտի ամբողջական և ճշմարտացի պատմությունը¹²։

* * *

Սյունիքի ազատագրական շարժումների հետ կապված առաջին կարևոր հարցը, որը կարոտ է լուսաբանման, նրա շարժառիթի հարցն է։

Այս հարցին «Ընտիր պատմութեան» հեղինակը հետևյալ պարզունակ պատասխանն է տալիս. «Արդ ի սոյնպիսի աուրս դառնութեան սասանութեան Ստեփաննոս անուամբ ոմն ի մերազնեայց ի կողմանցն Կալերոն՝ Վանքցի, խորհուրդ ի մտի դնէր, անցանէր ի Սիսական գաւառ և երթալ հասանիլ յաշխարհն Վրաց, ի քաղաքն Մծխէթ, առ Շահնուազ իշխանաց իշխանն Վրաց, և խնդրել ի նմանէ զայր մի տալ երկրին խափանու ի զօրագլուխ և հրաման տալ

8 Տե՛ս ՍՍՀՄ ԳԱ Հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», 1941, № 5—6, էջ 73—75։

9 Տե՛ս Հայկական ՍՍՀ ԳԱ, «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1950, № 2, էջ 55—84։

10 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 8815, Թ. 25ր—39ա։

11 Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ուսական հարաբերությունների պատմությունից (հավելված), Երևան, 1953։

12 Տե՛ս «Ընտիր պատմութիւն Դաւիթ քէզին»։

նմա զօրաժողով լինելոյ, և զերկիրն ի թշնամեաց պահելոյ»¹³։ Այնուհետև նա պատմում է, թե ինչպես ինքը Սյունիքի հիսուն տանուտերերի անունից դիմում է գրում, կնքում կեղծ կնիքներով և ներկայացնում Շահնավազին (Բակարին)։ Եվ ահա վերջինս վստահելով Ստեփանոս Շահումյանցին, Սյունիք է ուղարկում իր զինվորականներից Դավիթ բեկին։

Ստացվում է այնպես, որ եթե չլիներ Ստեփանոս Շահումյանցը, ապա ո՛չ վրաց արքունիքը Դավիթ բեկին կուղարկեր Սյունիք, և ո՛չ էլ այնտեղ ազատագրական շարժումներ կառաջանային։ Մեր հեղինակը Սյունիքի ազատագրական պայքարը ներկայացնում է բոլորովին մեկուսացած, կտրված շրջապատից։ Նա կարծես տեղեկություն չունի հարևան Ղարաբաղում և Վրաստանում ծավալված շարժումների մասին, թվում է թե լուր անգամ չունի ռուսական արշավանքի մասին։

Րրականում, Սյունիքի շարժումների առաջացումը միանգամայն այլ պատճառներ ուներ։ XVIII դարի քսանական թվականներին՝ Պյոտր I-ի ձեռնարկած արշավանքի նախօրյակին, Անդրկովկասում բռնկվել էին ազատադրական բուռն շարժումներ. ռուսական արշավանքը հայ և վրաց ժողովուրդների լայն շրջաններում վառ հույսեր էր արթնացրել, որ ռուսների օգնությամբ նրանք կարողանալու են տապալել օտարերկրյա լուծը և ազատություն են ձեռք բերելու։ Կազմակերպչական մեծ աշխատանքներ էին տարվում ամենուրեք. զինվում էին, կազմակերպվում՝ կազմ ու պատրաստ դիմավորելու ռուսական արշավող զորաբանակին։ Հայտնի է, որ Պյոտր I-ի հերքենդ ժամանելու նախօրյակին վրացական զորաբանակը Վախթանգ VI-ի գլխավորությամբ և Ղարաբաղի մելիքների զորքերը Ավան Յուզբաշու և Եսայի կաթողիկոսի գլխավորությամբ, իրար հանդիպեցին Գանձակում՝ նպատակ ունենալով միացյալ ուժերով հանդիսավորապես դիմավորել Պյոտր I-ին¹⁴։

Շահումյանցն արդարացի չէ, երբ Սյունիքի շարժման նախաձեռնությունն իրեն վերագրելու նպատակով, Սյունիքը ներկայացնում է շրջապատից կտրված։

Որ իրոք, Սյունիքում, Արցախում, Այրարատում բռնկվել էին ազատագրական շարժումներ, պարզ երևում է Իսրայել Օրու երբեմնի գործակից Մինաս վարդապետի 1722 թ. ռուսական արքունիքին ներկայացրած զեկուցագրից. «Այրարատում, Գողթան գավառում, Ղափանում և այլ տեղերում, նրանք (այսինքն՝ հայերը — Ա. Ա.) պատրաստ կանգնած են և սպասում են նորին կայսերական մեծությանը», — գրել է նա¹⁵։

Մինաս արքեպիսկոպոս Փերվազյանը, Թիֆլիսից Պյոտր I-ին ուղարկած 1722 թ. դեկտեմբերի 12-ի գրության մեջ հայտնել է. «Ղարաբաղումն կամ Խափանու յերկիրն միաբանեալ Հայքն յուրուրեք որ թուրք գտնում են, զամենն անխնայաբար կոտորում են, և զիրեանքն պահում են, բայց զլուխ և տէր չունին»¹⁶։

¹³ «Ընտիր պատմութիւն», էջ 3—4։

¹⁴ Հեռ, Հայոց պատմություն, հատ. 3, էջ 614։

¹⁵ Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898, № 334։

¹⁶ Նույն տեղում, էջ 338։

Ահա այս իրադրություն մեջ է, որ անհրաժեշտ է լինում Դավիթ բեկին հրավիրել Սյունիք՝ աղատագրական շարժումները զիսավորելու համար:

* * *

Հայագիտության մեջ տարածայնություններ կան Սյունիքի շարժման բնույթի հարցում. այն ժողովրդա-աղատագրական շարժում է եղել, թե՞ սոցիալական:

Դավիթ բեկը ժամանելով Սյունիք, նրա շուրջն են համախմբվում, ինչպես ներկայացնում է պատմիչը, «...արք իբրև շորեր հարիր, որք նեղեալք և տուռապեալք էին ի դռն ծառայութենէ ալաղղեաց, ա՛րք որք զանձինս իրեանց եղեալք էին առ ի աղատ լինելոյ ի լծոյ ծառայութեանն ալաղղեաց, ա՛րք որոց մինն հալածէր զհարիրս, և երկուքն՝ զհաղարս»¹⁷:

Որ Դավիթ բեկի շուրջը հավաքված զինվորականները իրապես օտար լծի տակ գտնվող տառապյալներ և հարստահարվողներ էին, որոշակի երևում է այն փաստից, որ երբ սյունեցի հայրենասերները Ազուլիսի կոնվներում բռնում են թուրք հարկահավաքին, զայրույթով սպասնում են նրան և նրա մոտ գտնվող 32 հազար հարկաթերթիկներն այրում¹⁸:

Սյունիքի աղատագրական շարժումների առաջին փուլում պայքարն ուղղված է եղել խանական իշխանությունների դեմ. այն նպատակ ուներ տապալել օտարերկրյա լուծը և աղատություն ձևեր բերել: Դրա համար Դավիթ բեկը կոնվում էր օտարազգի այն բոլոր իշխանավորների դեմ, որոնք ցանկանում էին պահպանել խանական իշխանությունը:

Սյունիքի աղատագրական շարժումը որոշակի ունեցել է ժողովրդա-աղատագրական բնույթ: Նրա նպատակն է եղել տապալել օտարերկրյա տիրակալների լուծը: Շարժմանը մասնակցել են Սյունիքի բնակչության սոցիալական բոլոր խավերը՝ գյուղացիները, տանուտերերը, մելիքները, արհեստավորները, առևտրականները և հոգևորականությունը: Բոլորովին անհիմն է պատմական գիտությունների զոկտոր Պ. Հարությունյանի առաջ քաշած այն կարծիքը, թե Սյունիքի շարժումը, իբր, եղել է գյուղացիական շարժում, որ գյուղացիներն ընդվզել են իրենց շահագործող կալվածատերերի դեմ¹⁹:

«Հենտիբ պատմութեան» վերջում բերված է շարժմանը մասնակցող ղեկավար զինվորականների ցանկը, որի մեջ հիշվում են Շնհերի, Տաթևի, Չավընդուրի, Կալերի, Մեղրի, Սիսիանի, Բաղաբերդի, Շիվանձորի և Սյունիքի մյուս վայրերի տիրույթների ունեցող աչքի ընկնող մելիքների և տանուտերերի անունները: Փաստեր չկան նույնպես, որ շարժումն ուղղված լիներ Տաթևի վանքի դեմ, որը Սյունիքի խոշոր կալվածատիրական տնտեսությունն էր: Հարությունյանի համար հիմք չէր կարող ծառայել հայրենասերների կողմից երեք հայ մելիքների՝ Տաթևի մելիք Բաղդիրի, Երեցվանիկի մելիք Ֆռանգյուլի և Ազուլիսի մելիք Մուսիի սպանության փաստը: Պատմիչը հանգամանորեն խոսել է

¹⁷ «Հենտիբ պատմութեան», էջ 6:

¹⁸ Նույն տեղում, էջ 56:

¹⁹ П. Т. Арутюнян. Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, М., 1954, էջ 125, 251 և հ.ա.:

ներանց սպանությունն պատճառի մասին. հայրենասերները այդ երեքին սպանել են ո՛չ թե նրա համար, որ նրանք խոշոր կալվածատեր էին, «ժողովրդի անխիղճ կեղեքողներ», այլ որ եղել են դավաճաններ. թշնամու դեմ վարած վճռական ճակատամարտերի ժամանակ նրանք անցել են թշնամու կողմը և օգնել նրան։

* * *

Ո՞վ էր Դավիթ բեկը, որին Շահնավազը հանձնարարել է Սյունիք մեկնել տեղի ղինական ուժը կազմակերպելու համար։ Այս հարցում հայագիտության մեջ կան տարբեր կարծիքներ։

Գյուլամիրյանցի հրատարակած «Ընտիր պատմութիւն» աշխատության մեջ Դավիթ բեկի անձնավորության մասին հետևյալ տեղեկությունն է հաղորդում. «...և կոչեալ (Շահնաւաղն) զԴաւիթ բէգն Սիւնեցի ի Հայկազնանս տոհմէ, ետ նմա ղիշխանութիւն երթալ յիւր հայրենի յաշխարհն Սիւնեաց, որ այժմ կոչի խափան, զօրաժողով լինիլ անդ, և պահել ղերկիրն Հայոց»²⁰։

Եթե հավատալու լինենք այս տեղեկությանը, ապա Դավիթ բեկը, անվիճելի, սյունեցի է, ուղարկվել է Սյունիք՝ ղորք հավաքելու և իր հայրենի գավառը օտար թշնամիներից պաշտպանելու։

Զեռագրերի ուսումնասիրությունից, սակայն, պարզվում է, որ Գյուլամիրյանցը Դավիթ բեկին սյունեցի դարձնելու միտումով փոփոխել, աղավաղել է բնագիրը։ Զեռագրերում Դավիթը համարված է ո՛չ թե սյունեցի, այլ՝ «Մցխիթացի»։ Դավիթ բեկի պատմության ոչ մի ընդօրինակություն Գյուլամիրյանցի առաջարկած տարբերակը չունի։ Վենետիկի Ե ձեռագրում այդ հատվածը ձևակերպված է հետևյալ կերպ. «...և կոչեալ Դաւիթ պէկն Մծխիթացի ի հայկազնանս տոհմէ, ետ նմա իշխանութիւն երթալ յաշխարհն Սիւնեաց, որ այժմ կոչի խափան, զօրաժողով լինել անդ, և պահել ղերկիրն Հայոց»²¹։

Այդ նույն հատվածը փոքր-ինչ այլ կերպ է ձևակերպված Սեբաստացու նախագաղափար բնագրում. այնտեղ Դավիթ բեկը ո՛չ սյունեցի է, և ո՛չ մցխեթացի, այլ հայաղգի մեկը. «Դաւիթ պէկն՝ որ ի յաղզէն Հայոց»²²։

Ուսումնասիրողները կողմնակի նյութերի հիման վրա տարբեր կարծիքներ են հայտնել Դավիթ բեկի ծննդավայրի մասին։ Այսպես, ըստ աղագրազետ Ե. Հալայանի, Դավիթ բեկը դափանցի է, ընտանեկան մի վեճի պատճառով գժտվել է յուրաքինների հետ, մեկնել Վրաստան և ծառայության մտել Վախթանգ Դ-ի բանակում²³։ Չամչյանը Դավիթ բեկին համարում է սյունեցի²⁴,

²⁰ Ընտիր պատմութիւն», էջ 5։

²¹ Վենետիկի մատենադարանի № 620 Ե ձեռագիր, էջ 3 (ձեռագրի էջերը մեր ձեռքի տակ գտնված տետրակի էջահամարով են նշված)։

²² Վենետիկի մատենադարանի № 620 Ա ձեռագիր, էջ 3 (ձեռագրի էջերը նշվում են մեր ձեռքի տակ գտնված տետրակի էջահամարներով)։

²³ Ե. Հ ա լ ա յ ա ն, Զանգեզուրի գավառը (տե՛ս «Աղագրական հանգես» Գ, XII, 1903, էջ 195)։

²⁴ Մ. Չ ա մ չ յ ա ն, Հայոց պատմութիւն, հատ. Գ, 1784, էջ 785։

Ալիշանը²⁵ և Լեոն²⁶՝ հալիձորցի, Րաֆֆին²⁷՝ Օրբելյանների ազգակից, Ա. Հովհաննիսյանը՝ ազգակից Ղափանի տոհմերից մեկնումեկին²⁸ և այլն²⁹,

Գրիգորիոպոլսի մագիստրատը 1797 թ. նոյեմբերի 16-ին մի տեղեկանք է ներկայացրել ռուսաց Պավել թագավորին՝ փոխգնդապետ Ստեփանոս Դավիդովին ազնվականական կոչում շնորհելու մասին: Այդ տեղեկանքից պարզվում է, որ Ստեփանոս Դավիդովը Դավիթ բեկի թոռն է: Ստեփանոսի նախնիները սյունեցի են, տեղափոխվել են Գեղարքունիքի Մմակ կոչվող գավառը, իսկ այնտեղից՝ Թիֆլիս: Տեղեկանքի բացատրականում ասված է. «Ամիրխանենք, որը կոչին այժմիկ ղասապ Աստուածատրենք, որը այժմիկ կան ծնունդը ազգի նորա, զոր Շահ[ա]վադ խանն առաքեաց ի Սիսիան օգնական լինել հայոց՝ յաւուրս Մեծին Պետրոսի: ԺԴ (14) ամ զօրացաւ յոյժ ընդդէմ պարսից և թուրքաց, ժողովեաց զզօրս հայոց մինչև ցվաթսուն հազար անձինս. և յետ յաղթութեանն, ինքն մահուամբ փոխեցաւ և իւր երեւելիքն անմիաբան լեալ ցրուեցան»³⁰:

Տեղեկանքում նշված է նաև, որ Ստեփանոս Դավիդովը Մագիստրատին ցույց է տվել իր ծննդաբանություն մասին մի վավերագիր, որի մեջ ասված է եղել հետևյալը. «Դարձեալ [Դավիդովը] եցոյց մեզ այլ թուղթ, ի սոյն թվոյս սկսեալ մինչև 1722 թուին փրկչին, և Հայոց ՌՃՀԱ (1171), վասն զօրանալոյ ազգատոհմին իւրեանց նորոգ Դաւիթ պէկ զօրապետին, թե ո՞պիսի հնարիւր գնացեալ է ի Սիւնիս ի նախկին հայրենին իւր (ընդգծումը մերն է — Ա. Ա.), ի ժամանակս աղուան Միրվէիզ շահին և անդ զօրաժողով արարեալ՝ զշրջակայ թշնամիսն և զօրսն օսմանցւոց հալածականս առնէ, որոյ քաջութիւնն յայտնի է, ի պատմութիւնս Հայոց»³¹:

Մենք այս վավերագիրը հրատարակել ենք որոշ վերապահությամբ՝ հայտնելով նաև մեր կասկածանքը. «Հարց է առաջանում,— դրել ենք մենք,— չի՞ կարող պատահել, որ գնդապետ Ստեփանոսը ազնվականի կոչում ստանալու համար կեղծած լինի իր ծննդաբանությունը՝ աշխատելով կապել իրեն Սյունիքի աղատազրական շարժումներում հերոսացած Դավիթ բեկի հետ: Անհավանական ոչինչ չկա, մանավանդ, եթե նկատի ունենաք, որ այդ ժամանակ ազնվականի կոչում ստանալու համար փաստաթղթեր կեղծելը սովորական երեւելիք էր»:

Այս վավերագրերի հարադատության վերաբերյալ բացասական կարծիք հայտնեց պատմ. գիտ. դոկտոր Վ. Հակոբյանը՝ առանց, սակայն, կոնկրետ փաստեր բերելու, թե ինչ հիմք ունի այն կեղծ համարելու: Լստ որում, նրա

25 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 256:

26 Լ. Լ. Ռ., Հայոց պատմություն, հատ. 3, էջ 669:

27 Րաֆֆի, Դավիթ-բեկ, Երևան, 1941, էջ 163:

28 Ա. Հովհաննիսյան, Դավիթ բեկի գլխավորած Ղափանի ապստամբությունը, էջ 102:

29 Այս մասին տե՛ս Ս. Օրբելյան, Դավիթ բեկի ծագումնաբանության հարցի շուրջը (տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1971, № 1, էջ 181):

30 Մաշտոցի անվան Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթ. № 6, վավ. № 45:

31 Ա. Գ. Արրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, էջ 94:

մատնացույց արած միակ փաստը, որ Ստեփանոս Դավիդովի տապանաքարի վրա (այն գտնվում է Գրիգորիոսյանում) ևս հիշվում է նրա ազգակցությունը Դավիթ բեկի հետ, գալիս է ոչ թե մերժելու վավերագրի տեղեկության իսկությունը, այլ հաստատելու այն. եթե ազնվականական կոչում ստանալու համար կարելի էր կեղծել վավերագրեր, ապա անհավանական է, որ Ստեփանոսին ծանոթ անձինք ևս նրա տապանաքարի արձանագրության մեջ անհրաժեշտ համարեին կեղծիքի գիմելու:

Ուշագրավ է Դավիթ բեկին մոտ ժամանակներում գրված Դանիել գրչի չափածո հիշատակարանում մատնացույց արված փաստը.

Սակաւագիծ ճառս վիպական,
Վիպէ զաբարս քաջին Դաւթեան,
Որ ի յԱբանտ տան Սիւնական (ընդգծումը մերն է— Ա. Ա.),
Վասն հաւատոյ քրիստոսական:
Ղօղեալ ելով ի խորշ անկեան,
Ի տան մեծի քաջազօրմեան,
Աստուածատուրոյ մեծ Աբրօեան (ընդգծումը մերն է— Ա. Ա.)
Յորմէ առաք զպատնէն սորայն³²:

Այստեղ, ինչպես տեսնում ենք, Դավիթ բեկը համարվում է սյունեցի (Հաբանդ զավառից) և հիշվում է հոր անունը՝ Աստվածատուր:

«Վիպագիր Ուուպելեանց» խորագրով մի տեղեկանքում, որը կազմված է Տաթևի վանքում 1835 թ. և ստորագրված Մյունխերում իր ժամանակի աչքի ընկնող մի շարք հոգևորական և աշխարհական անձնավորությունների կողմից, Դավիթ բեկի ծննդաբանության մասին հետևյալն է ասված. «Մենք ի Սիւնեաց զաւառի բնակիչ ի ներքոյ ստորագրող անձինքս, տամք զծանօթութիւն և զվկայութիւն ամենայն տոհմականացն Դաւիթ բէկին, յորմէ անմիջապէս ցմեր ժամանակ սերեալք են, առ այս՝ զի սույն Դաւիթ բէկն, յորդի Աստուածատուր իշխանին Սիւնեաց, ունէր զհօրեղբայրս Սարգիս բեկ և Մելիք Եղիայ անուն, որոց և բնակութիւն էր ի Ղափան զաւառի ի բերդին Հալիձորոյ»³³:

Մաշտոցի անվան Մատենադարանի № 2888 ձեռագրի պարունակած Հովհաննես Մելիք-Սելիմյանցի «Համառոտութիւն պատմութեան Հայկազեան» աշխատության մեջ (ընդօրինակված է 1827 թ.), Դավիթ բեկի ծագման մասին ասվում է, որ նա էր «...ի զաւառէն Գեղամայ... իշխանաւոր ոմն Հայոց, այր փառաւոր և ճոխ, Շահնազար անուն, որ ի թոռան մելիք Սադաղայ պէկի իշխանի Գեղարքունոյ, որդւոյ Ալահվերդի, այսինքն՝ սեպուհ Աստուածատուր իշխանի Սիւնեաց...»³⁴ (ընդգծումը մերն է— Ա. Ա.):

Մատենադարանի այս ձեռագրի տեղեկությունը փաստորեն հաստատում է Ստեփանոս Դավիդովի տեղեկանքի վավերականությունը. երկուսի մոտ էլ Դավիթ բեկը սյունեցի է, երկուսի մոտ էլ նրա նախնիները Մյունխից են եկել և հաստատվել Գեղարքունիքում, երկուսի մոտ էլ Դավիթ բեկի հայրը Աստվածատուրն է (Ալահվերդին):

³² Լենինգրադի Արևելյան ինստիտուտի B—129 ձեռագիր ընդօրինակությունից:

³³ Ն. Ադոնց, «Դավիթ բեկ» վեպի պատմական հիմք և զաղափարական արժեքը, էջ 135—136:

³⁴ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2888, էջ 656:

Այսպիսով, առկա փաստերը հիմք են տալիս հաստատապես ասելու, որ Դավիթ բեկը Սյունիքից է։ Պատահական չպետք է համարել, որ Շահնավադը նպատակահարմար է գտել հատկապես սյունեցի իր ղինվորականներից մեկին ուղարկել հայրենի գավառը։

Եթե անվիճելի համարվի Ստեփանոս Դավիդովի Դավիթ բեկի թոռ լինելու փաստը, այդ դեպքում հնարավոր է դառնում լուծել նաև նրա ժառանգների հարցը։ Հայագիտության մեջ քաղաքացիություն ունի այն կարծիքը, թե Դավիթ բեկը ամուսնացած չի եղել և ժառանգ չի ունեցել։ Այսպես, ըստ աղագրագետ Ե. Լալայանի՝ «Դավիթ բեկը չէր ամուսնացել և ժառանգ չուներ»³⁵։ Նույնն է ասում և Բաֆֆին։ Վերը հիշված վավերագրից երևում է, որ Դավիթ բեկը ամուսնացած է եղել և ունեցել է Մխիթար անունով մի որդի, որը գործունե ամսնակցություն է ունեցել օսմանցիների դեմ մղած կռիվներում և իր քաջագործության համար ստացել է «Ղզըլ խանչալ քյայան» մականունը, որ նշանակում է «Կարմիր դաշույն կրող առաջնորդ»։ Հետագայում Մխիթարը հոգևոր կոչում է ստացել, քահանա ձեռնադրվել և վերանվանվել Իսահակ։ Սա ունեցել է երկու որդի, որոնցից մեկը փոխգնդապետ Ստեփանոս Դավիդովն է՝ Հայաստանի ազատագրության հարցով ցարական արքունիքի հետ բանակցություն վարող Արարատյան երկրամասի նշանավոր լիազոր-պատգամավորը, իսկ մյուսը՝ էջմիածնի միաբան Իսահակ եպիսկոպոսը, որը կաթողիկոսության նվիրակն է եղել Պոլսում և Զմյուռնիայում։

Ինչ վերաբերում է Դավիթ բեկի անձնական բարեմասնություններին, ապա «Ընտիր պատմութեան» մեջ նա հետևյալ ձևով է բնութագրված. «Եւ ինքն Դաւիթ էր աղնուական, բարեպաշտ, արդարակորով, ծանօթ գրոց, արիասիրտ, երկայնամիտ խորհրդով, զօրաւոր բանիւր և գործովք, և վրէժխնդիր թշնամեաց Աղգին մերոյ՝ ինքն և ամենայն հետևողք իւր»³⁶։

* * *

Քանի՞ հոգի է Դավիթ բեկը Մծխեթից տարել իր հետ։ Այդ հարցին անհրաժեշտ է անդրադառնալ, որովհետև պատմագիտության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվել։ Եթե հավատալու լինենք Ղուկաս Սեբաստացու նախագաղափար բնագրին, ապա Շահնավադը Դավիթ բեկին Սյունիք է ուղարկել 2000 հոգուց բաղկացած մի ղորաբանակով. «Եւ ետ (Շահնաւաղն) ղ'Դաւութ պէկն՝ որ ի յաղգէն Հայոց, երկու հազար արամբ և ղիշխանութիւն ետ նմա ղզօրս զումարել և պահել ղերկիրն Խափանու»³⁷։ Այս տեղեկությունը բացահայտ թյուրիմացություն է։ Հավանական է, Սեբաստացու մոտ այդ թյուրիմացությունն առաջացել է Շահումյանցի հաղորդած տեղեկությունը սխալ հասկանալու հետևանքով. Շահումյանցը, հավանական է, 2000 հոգի ասելով նկատի է ունեցել Սյունիքի ղինված ուժերի թիվը։

Թյուրիմացության արդյունք է նաև Լալայանի հրապարակած այն տեղեկությունը, որ Դավիթ բեկը իբրև թե Վրաստանից իր հետ բերել է 300—400 հոգուց բաղկացած մի ղորագունդ³⁸։

³⁵ Տե՛ս Ե. Լալայան, նշվ. աշխ.։

³⁶ «Ընտիր պատմութիւն», էջ 6։

³⁷ Վնեւտիկի № 620 Ա ձևագիր, էջ 3։

³⁸ Ե. Լալայան, նշվ. աշխ.։

Դավիթ բեկի Մծխեթից Սյունիք բերած զինվորական ջոկատը, ինչպես պարզվում է, բաղկացած է եղել ընդամենը 30 հոգուց: Այդ մասին հավաստի կարելի է համարել Պյոտր I-ի պատվիրակ Իվան Կարապետի 1724 թ. փետրվարի 2-ին ուսական արքունիքին ուղարկած տեղեկությունը. «Եւ Վախթանգին տղէն [այսինքն՝ Շահնավազ խանը — Ա. Ա.] ուր մարթէն 10 (30) մարթ [այ] ուղարկել Մեծ Խայէրին մէջն, էդպէս լսեցինք»³⁹:

Չնայած այս տեղեկության մեջ խոսք չկա Դավիթ բեկի մասին և ոչ էլ Սյունիքի, սակայն լեոն սրամտորեն կռահել է, որ այստեղ խոսքը վերաբերում է Դավիթ բեկին և նրա հետևողներին⁴⁰:

Մաշտոցի անվան Մատենադարանի № 2888 ձեռագիրը, որը պարունակում է Հ. Մելիք-Սելիմյանցի «Համառոտ պատմութիւն Հայկաղեան» աշխատությունը և ուր օգտագործված է Դավիթ բեկի մասին մեզ անծանոթ մի աղբյուր, Դավիթ բեկին ուղեկցող մարդկանց թիվը հաշվել է 40 հոգի. «(Դավիթ բեկ) ընդ իւր առեալ արս իբրև քառասուն»⁴¹:

Այսպիսով, պարզվում է, որ Դավիթ բեկը Մծխեթից Սյունիք է եկել 30—40 հոգով:

Սեբաստացու նախագահափար օրինակում Դավիթ բեկին ուղեկցող զինվորականներից անուններով հիշված են՝ «Ավթանդել, Կեօրկն, Կեօրկի փոքր կոչեցեալ, Ծատուր, Ղարակեօղ, Թաթոս, Եղեազար, Յարութիւն և այլն»: Այդ անունները վերստին կրկնվում են վերջում՝ «զօրապետների» ցանկում⁴²:

* * *

Սյունիքի զինված ուժերի և խանական զորքերի միջև առաջին խոշոր ճակատամարտը տեղի է ունենում Ջավնդուրում: Ըստ Ստեփանոս Շահումյանցի տեղեկության, Ղափանի սուլթանը, Բարգուշատի սուլթանը և Սև լեռան խանը միավորելով իրենց զինական ուժերը, հարձակվում են Դավիթ բեկի զորքի վրա «քառասնորդաց պահուց ի տօնի սրբոյ լուսաւորչի»: Հայկական զորքը «...որք դարան մտեալք էին նոցա ի տօնի Ս. Յարութեանն Քրիստոսի..., յանկարծակի զաղաղակ բարձին, ի վերայ յարձակեցան, հարին՝ կոտորեցին զբազումս ի նոցանէ, և զայլսն ի փախուստ դարձուցին»⁴³:

Ե՞րբ է տեղի ունեցել այդ ճակատամարտը: Լեոն⁴⁴, Ա. Միրզոյանը⁴⁵, Հ. Կնյազյանը⁴⁶, ըստ երևույթին ծանոթ չլինելով տոմարական հաշվումներին, դժվարացել են պարզել ճակատամարտի ամսաթիվը և նշել են միայն թվականը՝ 1723 թ.: Դավիթ բեկի Սյունիք գալու երկրորդ տարին՝ «...ի յամին երկրորդ գալստեանն Դաւթի»⁴⁷:

39 Ա. Գ. Արա համյան, նշվ. աշխ., էջ 159 (№ 14 վավերագիր):

40 Լեո, Հայոց պատմություն, հատ. 3, էջ 688:

41 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2888, թ. 334ր:

42 Վենետիկի № 620 Ա ձեռ., էջ 3 և 28—29:

43 «Ընտիր պատմութիւն», էջ 10:

44 Լեո, Հայոց պատմություն, հատ. 3, էջ 676:

45 Ա. Միրզոյան, Հայ ազատագրական շարժումները Սյունիքում (տե՛ս «Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի», հատ. 2, Երևան, 1950, էջ 155):

46 Հ. Կնյազյան, Ազատագրական պայքարը Դավիթ բեկի գլխավորությամբ, Երևան, 1963, էջ 91:

47 «Ընտիր պատմութիւն», էջ 10:

«Ընտիր պատմութեան» մեջ, բարեբախտաբար, վերը բերված տոմարական հաշիվը հնարավորություն է տալիս մեզ անսխալ որոշելու խանական զորքերի հարձակման և Չավնդուրում տեղի ունեցած իրադարձությունների ոչ միայն թվականը, այլև՝ ամիսն ու ամսաթիվը: Դավիթ բեկը Սյունիք է եկել 1722 թ., հաջորդ տարվա Լուսավորչի տոնը եղել է մարտի 31-ին. այդ օրն է, որ խանական զորքերը սկսել են իրենց հարձակումը, իսկ Հարություն տոնը՝ զատիկն այդ տարում եղել է ապրիլի 14-ին, այդ օրն էլ հայկական զորքերը ջարդել են խանական միացյալ զորաբանակին:

Մեր կարծիքով, այդ ճակատամարտին է վերաբերում Մինաս վարդապետի 1723 թ. ապրիլի 19-ի ուսական արքունիքին հայտնած ուշադրավ մի տեղեկություն, որ Թահմազը՝ շահի տղան, «չորս խաների, իրենց զորքերով, ուղարկել է հայերի վրա Աղուլիս կոչվող վայրը, ուր հավաքվել են հայերը: Եվ կարգադրել է նրանց բոլորին էլ կոտորել: Երանց դալուց հետո, տեղեկացանք, որ ճակատամարտ է տեղի ունեցել: Խաները հագիվ են կարողացել փախչել, իսկ մյուսներին, շատերին, կոտորել են: Այդ ճակատամարտում եղել են վրացիներ՝ Վախթանգից օգնության ուղարկված մարդիկ»⁴⁸: Մինաս վարդապետը «Վախթանգի մարդիկ» ասելով, անշուշտ, նկատի է ունեցել Դավիթ բեկին և նրա Վրաստանից բերած հայ զինվորներին:

Հավանական է, այդ նույն ժամանակին է վերաբերում Նախիջևանի շրջանի, գուցե նաև Նախիջևան բաղաթի գրավումը Դավիթ բեկի զորքերի կողմից: Այդ երևում է Մինաս վարդապետի վերը հիշված լեզուագրից. «Հավաքվել են հայերը թվով 24000 հոգի և գնացել Նախիջևան կոչվող բաղաթի (բառացի՝ վայրի) վրա, պաշարել են այն և գրավել: Այժմ այդ վայրը պահում են իրենց ձեռքում»⁴⁹:

Սյունեցիների պայքարը Սեֆյանների դրածո խաների դեմ շարունակվել է հետագայում ևս: Խանական իշխանությունները ոչ մի կերպ չեն ուղեցել հաշտվել Սյունիքում ստեղծված իրավիճակի հետ և աշխատել են ազատագրական շարժումները խեղդել իր բնում, բայց հաջողություն չեն ունեցել:

Ըստ Պետրոս դի Սարգիս Գիլանենցի տեղեկության, խանական զորքերը փորձել են Սյունիք խուժել 1723 թ. ամռանը: Այդ մասին նա հաղորդել է ուսական արքունիքին. «Վերոյ թարեղումն (նկատի ունի 1723 թ. օգոստոս ամիսը) որ խաբար արեկ,— դրել է նա ուսական արքունիքին,— թե զվրաշն գնացել այ Ղափանստան այ մտել...»⁵⁰:

Տեղի խաները ի վիճակի չլինելով ճնշելու Սյունիքի ազատագրական շարժումը, դիմել են շահ Թահմազին և նրանից օգնություն խնդրել: Այդ մասին ուսական արքունիքում ստացվել է հետևյալ տեղեկությունը. «Ղափանում բազում թվով զինվորական հայեր են հավաքվել, և միավորվելով Նախիջևանի հայկական զինվորականության հետ, նեղում են մերձակա շրջանների մահմեդականներին, որոնք գնացել են շահի մոտ և խնդրել՝ հայերի դեմ զորք ուղարկելու, քանի որ նրանք մեծամեծ վնասներ են հասցնում...»⁵¹:

⁴⁸ Эзов, Сношения..., էջ 348:

⁴⁹ Նույն տեղում, էջ 347:

⁵⁰ «Կոունկ Հայոց աշխարհին», 1863, էջ 207:

⁵¹ АВР, ф. СРП, 1724, л. 6. р. 12—13:

* * *

Սյունիքի ներսում տեղի ունեցող խոշոր ճակատամարտերից մեկը եղել է Որոտանի ճակատամարտը՝ Դավիթ բեկի և Ասլամաղ Ղուլի խանի զորքերի միջև։ Ասլամաղ Ղուլին հանդիսանում էր պարսկական դրածո այն խաներից մեկը, որն ամեն ջանք գործ էր դնում ճնշելու Սյունիքում ծավալված ազատագրական շարժումները։ Նա բավական խոշոր զորաբանակ ուներ Որոտան բերդում և մեծ վտանգ էր ներկայացնում սյունեցիների համար։ Այդ նկատի ունենալով, Դավիթ բեկը որոշում է գրավել Որոտանը և ցրել այնտեղ կենտրոնացած թշնամական զինական ուժը։ Այս մասին «Ընտիր սլափնության» հեղինակը հետևյալ հակիրճ տեղեկությունն է հաղորդում. «Եւ ի յամի երրորդի՝ յետ գալստեան իւրոյ ի Խափան՝ երթայ պաշարէ զմեծ և զանառիկ բերդն Որոտնայ, և ի տօնի Ծաղկազարդին, որ օր շորրորդ էր պաշարման բերդին, եղև անձրև սաստիկ յոյժ (ո՛վ սքանչելեացս), և ի սաստկութենէն անձրևին մի կողմն պարիսպին ինքնին անկաւ։ Սորա իբրև զայն տեսին, ձայն ետուն, խրախոյս բարձեալ ի վերայ յարձակեցան, և մտեալ ի ներքս... առին զբերդն»⁵²։

Այս տեղեկության մեջ որոշակի է Որոտանի ճակատամարտի և՛ թվականը, և՛ ամսաթիվը։ Դավիթ բեկի գալստյան երրորդ տարին կլինի 1724 թ., իսկ ամսաթիվը դժվար չէ պարզել Ծաղկազարդի տոնի հիման վրա, որը վրիպել է ուսումնասիրողների ուշադրությունից։

Ծաղկազարդը տվյալ թվականին, ինչպես կարելի է լինում պարզել տոմարական անվիճելի տվյալների հիման վրա, տոնվել է մարտի 29-ին, այդ օրն է վերցվել Որոտանի բերդը, իսկ բերդի պաշարումը սկսվել էր դրանից չորս օր առաջ, ուրեմն՝ մարտի 26-ին։

* * *

Շահ Թահմազին և նրա ենթակա խաներին, հասկանալի է, հանդուրժելի չէին կարող լինել սյունեցիների հաջողությունները, ուստի նրանք ձեռնարկում են խոշոր մի հարձակում Դավիթ բեկի զորքերի դեմ։ Հիմնական ճակատամարտը տեղի է ունենում Նախիջևանում, ուր և սյունեցիները պարտություն են կրում։

Նախիջևանում խանական զորքերի և Դավիթ բեկի զորքերի միջև տեղի ունեցած ճակատամարտը «Ընտիր սլափնության» մեջ նկարագրված է շատ պարզունակ։ Ռուսական արքունիք հասած տեղեկությունները մեզ հնարավորություն են տալիս այդ ճակատամարտը լուսաբանելու ավելի հավաստի ձևով. Դավիթ բեկը տեղեկանալով, որ պարսկական խաները միավորել են իրենց ուժերը և պատրաստվում են հարձակվել Սյունիքի վրա, ինքն է նախահարձակ լինում։ Հիմնական ճակատամարտը տեղի է ունենում Նախիջևանում, ուր Դավիթ բեկի զորքը պարտություն է կրում և մեծ թվով զոհեր տալիս։ Ամենայն հավանականությամբ, Նախիջևանի ճակատամարտին մասնակցել են Սյունիքի ոչ բոլոր զորքերը, այլ միայն՝ Սիսիանի զորամասը։

Պյոտր I-ի պատվիրակ Իվան Կարապետի ռուսական արքունիք ուղարկած

⁵² «Ընտիր սլափնություն», էջ 13։

զեկուցագրերից հնարավոր է լինում պարզել նախիջևանում տեղի ունեցած ճակատամարտի ժամանակը:

1724 թ. ապրիլի 9-ի արքունիք ուղարկած զեկուցագրում նա հայտնել է, որ Ղարաբաղի հայ զինվորությունը իր զեկուցագիրը գրելու օրը մեկնել է Սյունիք, որովհետև կռիվ է տեղի ունեցել սյունեցիների և նախիջևանի խանի զորքերի միջև, և հայերը պարտվել են: «նայերն էսօր գնացին... Ղափան,— գրել է նա,— ես էլ գէ գնում Ղափան»⁵³:

Իվան Կարապետն իր մի այլ զեկուցագրում, որը նա գրել է հուլիսի 18-ին, հետևյալն է հայտնում նախիջևանի այդ ճակատամարտի մասին. «Ի փոքր ծառայէտ արզ լինի վերոգրեալին ղուլուղումըն, որ մեք ապրիէլի ԺԵ.ումն (15-ումն) գնացինք Ղափան հայոց ղօշունովն, շուն Ղափանայ գիր էր եկէլ՝ թէ նախշվանայ խանըն և Բարգօշատայ սուլթանըն եկէլ ին Ղափան, հայոց ազգին շատ՝ ԴԵՌ (4000—5000) ղօշում ին ջարթէլ, օղլուշաղ եսիր ին արարէլ, տարէլ ...Եւ մեք ղօշունով գնացինք Ղափան, տեսինք, որ խայէրն ջարթվել էն և քորգի ղօշունըն յիդ ին դառցէլ, գնացէլ»⁵⁴:

Ղարաբաղից Սյունիք եկած այս օգնության մասին տեղեկություն կա և «Ընտիր պատմութեան» մեջ. «Եւ դէպ լինէր, յաւուրսն յայնոսիկ Յովհաննէս պետին Դուգարացոց՝ գալ ի կողմանս յայնոսիկ յիսուն և վեց հազար հայա-գունդ զօրօք...»⁵⁵: Այստեղ «Ընտիր պատմութեան» հեղինակը, սակայն, թույլ է տվել երկու անձշտություն. Դիզակի Ավան յուզբաշուն դարձրել է գուգար-քեցի և Ղարաբաղի 2000 հոգուց բաղկացած զորաբանակի թիվը մեծացնելով հասցրել է 56000-ի:

Եթե ընդունելու լինենք, որ նախիջևանի ճակատամարտի լուրը Ղարաբաղ կարող էր հասնել մի քանի օրվա ընթացքում, և Ղարաբաղի հայերը առանց հետաձգելու նրանց օգնության պիտի գնացած լինեին, ապա այդ դեպքում նախիջևանի ճակատամարտը պետք է եղած լինի 1724 թ. ապրիլի սկզբներին:

* * *

Սյունիքի ազատագրական շարժումների հետ կապված կարևոր իրադարձություններից մեկը Պյոտր I-ի պատվիրակ Իվան Կարապետի այցելությունն է Սյունիք, որի մասին զարմանալիորեն լուում է «Ընտիր պատմութեան» հեղինակը: Այն վրիպել է նաև այնպիսի մանրախույզ պատմաբանի ուշադրությունից, ինչպիսին Լեոն է:

1723 թ. մարտ ամսին, ինչպես հայտնի է, Ղարաբաղի մի խումբ մեկիքներ, երիցվանքի ներսես կաթողիկոսի հետ միասին, դիմում էին ուղարկել Պյոտր I-ին և խնդրել օգնել իրենց ազատագրվելու օտարերկրյա հարստահարիչներից: Պյոտր I-ը, ցանկանալով հուսադրել հայ ժողովրդին, որպեսզի նրանք չհուսահատվեն Դադստանից իր ետ վերադառնալու պատճառով, Անդրկովկաս է գործուղում իր պատվիրակ Իվան Կարապետին, որ Մոսկվայում բնակություն հաստատած հայերից էր: Նա իր հետ բերում է Պյոտր I-ի հայ ժողովրդին տված հայտնի հրովարտակը և հուշագիրը: Հուշագրում Պյոտր I-ը որոշակի խոստա-

⁵³ Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 204:

⁵⁴ Նույն տեղում, էջ 214:

⁵⁵ «Ընտիր պատմութիւն», էջ 10:

նում էր հայ ժողովրդին. «...մեր ձեր խնդրվածքովն ըզձեզ մեր թագաւորութեան հրամանին տակն կու բերեմք, և ըզձեզ նեղութիւնիցն անհաւատի ձեռնիցն կազատեմք և ամենայն ժամ էդ ջաթտան մեր հազիր ամք»⁵⁶:

Իվան Կարապետը Ղարաբաղ է ժամանում 1724 թ. սկզբին, Ղարաբաղում ցույց է տալիս Պյոտր I-ի հրովարտակը և հուշագիրը, աշխատում է ի մի բերել Ղարաբաղի պառակտված քաղաքական շրջանները, միջամտում է՝ փոխադարձ օգնության պայմանագիր կնքելու Ղարաբաղի հայերի և Գանձակի ադրբեջանցիների միջև, կազմակերպում է Ղարաբաղի հայոց զինական ուժը և այլն: Պատվիրակի խնդիրը, սակայն, չպետք է սահմանափակվեր Ղարաբաղով, նա պիտի շրջագայեր Հայաստանի մյուս շրջանները, կազմակերպեր և հող նախապատրաստեր արշավող ռուսական բանակի համար:

Ղարաբաղ ժամանելու առաջին օրերին նա հետաքրքրվել է Սյունիքի վիճակով և իր առաջին զեկուցագրերից մեկում հայտնել ռուսական արքունիքին, որ Սյունիքում գործում է Դավիթ բեկը, որը ուղարկվել է Շահնավաղ խանի կողմից⁵⁷:

Իր հաջորդ զեկուցագրում հայտնել է արքունիքին, որ ինքը ցանկանում է անձամբ գնալ Սյունիք, ծանոթանալ տեղի իրավիճակի հետ. «էս խայերն (այսինքն՝ Ղարաբաղի հայերը — Ա. Ա.), — գրել է նա, — դառ շորսէն մէկ բաժինն չեն, դառ Մեծ Խայերըն չենք գնացել... Աստուծոյ ողորմութեամբն և թագաւորին շաղաւթովն ջահտ կառեմ, որ գնամ Մեծ Խայերին մէջն, էնդոնց որ յիմաց կառեմ և տեսնեմ թէ որչանք մարդ կոյ լինի, հազրել կո տանք»⁵⁸:

Օգտվելով առիթից, որ Ղարաբաղի զինվորականությունն օգնության է գնում Սյունիքին՝ նախիջևանի հայերի պարտության լուրն առնելով, ինքը ևս միանում է նրանց:

Իվան Կարապետը Սյունիքում գտնված ժամանակ իր հետ տարած է եղել Պյոտր I-ի հայ ժողովրդին շնորհած հրովարտակը, որը ցույց է տվել սյունեցիներին: Տեղացիները ծանոթացել են նրա հետ և իրենց հպատակությունը հայտնել ռուսական արքունիքին. «Եւ ես թագաւորին ուրազն նշանց տվի, — գրում է նա արքունիքին, — կարդացին. ոխշ միայբերան ասում ան թէ մեր թագավորին ծառայ եանք»⁵⁹:

Որ սյունեցիները, իրոք, ռուսական կողմնորոշում են ունեցել, այդ երևում է նաև Քյոխվա Չելեբու 1724 թ. նոյեմբերի 5-ին արտաքին գործերի կոլեգիայում արած հայտարարությունից. «Եւ նույն Ղափանի հայությունը միախորհուրդ ցանկանում է մտնել նորին կայսերական մեծության հովանավորության տակ»⁶⁰:

* * *

Սյունեցիները օտարերկրյա թշնամիների դեմ կռվում էին հրադենով, ուստի անհրաժեշտ է պարզել, թե նրանք որտեղից էին ձեռք բերում հրացանը, վսողոր և արձիճը: Այս հարցի պատասխանը մենք գտնում ենք Թավրիզից Բաբու եկած Աբել անունով մի հայ վաճառականի Բաբվի ռազմական իշխանու-

56 Эзов, Сношения..., էջ 357:

57 Ա. Արրահամյան, նշվ. աշխ., էջ 81:

58 Նույն տեղում, էջ 81:

59 Նույն տեղում, էջ 214:

60 Эзов, Сношения..., էջ 388:

թյուններին տված տեղեկությունից: Նա նախ հայտնել է, որ շահ Թահմալը մտադիր է հարձակվել Սյունիքի վրա. «Շահը հաստատապես մտադիր է,— հայտարարել է նա,— զորք ուղարկել Ղափանի հայերի վրա՝ նրանց ցրիվ տալու նպատակով, որովհետև մեծ թվով զինվորական հայեր են հավաքվել այնտեղ, որոնք միացել են Նախիջևանի և նրա մոտիկ շրջանների հայկական զինվորականության հետ»⁶¹: Այնուհետև նա տվել է մեզ հետաքրքրող հարցի պատասխանը. «Թավրիզում երեսուն մարդ շահի հրամանով պատժվեցին, որովհետև նրանք արձիճ և վառող էին դնել և տանում էին Ղափան»⁶²:

Եվ այսպես, պարզվում է, որ սյունեցիները հրազենը ձեռք էին բերում Թավրիզի առևտրական շուկայում:

* * *

1724 թ. ամռանը, երբ թուրքական զորաբանակներից մեկը շրջապատել էր Երևանը, իսկ մյուսը խուժել պարսկական հողը և սկսել զրավումներ կատարել, երբ հայերն ամենուրեք հերոսաբար կռվում էին թուրքերի դեմ, պարսկական արքունիքը հիմնովին վերանայում է իր վերաբերմունքը դեպի հայերը և ո՛չ միայն փոխում է իր թշնամական դիրքը սյունեցիների նկատմամբ, այլև նրանց վրա նայում որպես հավատարիմ դաշնակիցների: «Ընտիր պատմութեան» մեջ այդ մասին մատնացույց է արված հետևյալ փաստը: Երևանի խանի եղբայրը զորքով գալիս է Սրղուբադ՝ օգնության գնալու իր եղբորը, որը գտնվում էր Երևանում: Սաֆի Ղուլին, որը սյունեցիների դեմ կռվող խաներից մեկն էր, գնդատվում է նրան, որ սյունեցիներն իրենց հանգիստ շեն տալիս, անվերջ հարձակվում են իրենց վրա և նեղում: Երևանի խանի եղբայրը կանչում է սյունեցիների ներկայացուցիչներին, լսում նրանց բացատրությունը և պաշտպանում է սյունեցիներին, ծեծում է Սաֆի Ղուլուն և տուգանում նրան ու հանձնարարում սյունեցիների հետ հաշտություն կնքել⁶³:

Երևանի պաշարումը, ինչպես պարզվում է հավաստի տվյալներով, տեղի է ունեցել 1724 թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին, հետևապես Շահումյանցի նկարագրած իրադարձությունները տեղի պետք է ունեցած լինեն հուլիս-օգոստոս ամիսներին և դրանից ոչ ուշ, ինչպես քաղաքացիություն է ստացել պատմագիտության մեջ:

* * *

Թուրքական զորքը, ըստ «Ընտիր պատմութեան», Սյունիքի վրա է հարձակվել 1726 թվականին (հայկական թվականով 1175-ին): Պարզվում է, որ այդ թվականը բնագրի մեջ է մտել թյուրիմացաբար: Վենետիկի ձեռագրում թվականը պարունակող նախադասությունը հանդիպում է հետևյալ ձևով... «Ապա յամի տեառն 1726 (վեցը մատիտով գրված— Ա. Ա.) և ի թուոյն շայոց ՌժՂԵ («Ե»-ն մատիտով ավելացված— Ա. Ա.) դիմեցին դալ հասանիլ յաշխարհ[ն] Սիւնեաց»⁶⁴:

61 Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 84:
62 Նույն տեղում, էջ 86:
63 «Ընտիր պատմութեան», էջ 37:
64 Վենետիկի Ա ձեռագիր, էջ 20:

Ուրեմն, «Ընտիր պատմութեան» նախագաղափար օրինակը գրելիս հաստատապես չեն իմացել թուրքական զորքերի Սյունիքի վրա հարձակվելու ձիշտ թվականը, ուստի այն գրել են մատիտով, որպեսզի հետագայում ձշտեն: Իսկ «Ընտիր պատմութեան» խմբագրված բնագրում, ինչպես երևում է Վենետիկի B ձեռագրից⁶⁵, մատիտով պայմանական գրված թվականը թանաքի է վերածվել և քաղաքացիություն տվել սխալ թվականին:

Թուրքական բանակի 1725 թ. Սյունիք մտնելու մասին է խոսում այդ նույն տարում ռուսական արքունիք հասած հետևյալ տեղեկությունը. «Թուրքական փաշան Նախիջևանից Դավիթ բեկի մոտ մարդ է ուղարկել և նրանից հպատակություն պահանջել սուլթանին: Սակայն Դավիթ բեկը վճռականորեն մերժել է այդ առաջարկությունը և հայտնել, որ ինքը հպատակվել չի կամենում և մինչև իր կյանքի վերջը կպայքարի նրանց դեմ»⁶⁶:

Թուրքական զորքերը Սյունիք են մտել 1725 թ. գարնանը: Այդ ժամանակ էլ տեղի է ունեցել Հալիձորի ճակատամարտը: «Ընտիր պատմութեան» մեջ հիշված տոմարական մի հաշվի հիման վրա կարելի է որոշել ճակատամարտի ամիսն ու ամսաթիվը: Այնտեղ ասված է. «[Օսմանցիք] եկին բանակեցան յայնկոյս գետոյն հանդէպ Հալիձորոյ, յերեքտասաներորդում աւուր քառասներորդաց պահոց»⁶⁷: 1725 թ. քառասներորդաց պահոց 13-րդ օրը եղել է փետրվարի 20-ին. քանի որ հայտնի է, որ ճակատամարտը տեղի է վեց օր, հետևապես Հալիձորի ճակատամարտը սկսվել է 1725 թ. փետրվարի 20-ին և վերջացել փետրվարի 26-ին:

Հավանական է, Հալիձորի ճակատամարտին է վերաբերում Իվան Կարապետի՝ 1725 թ. մայիսի 18-ին Պյոտր I-ի գաղտնի խորհրդական Պյոտր Անդրեևիչ Տոլստոյին ուղարկած հայատառ ռուսերեն հետևյալ տեղեկությունը. «Այն նիւնը պըրիշլի կուպցի իդ Իրևան, ըսպրաշըվիլի՝ ըշդօ վեղըմը, ըսկաղալի՝ սեմսօտ լուտի պրիշլի ըզ պօսոլըմ, նէ զնայը, իզ նա՞շըվ, իլի ցիցըր Շահնավազ խանը շէլէվէք: Այ իմը եվօ Դաւուտ պէկ: Օնը ժը ժիվեօտ Կապանցկի զեմլա, դամըշնի արմանին սօպրալ սեպէ: Թուրք պրիշօլ, պատալի դավալ, ադ նիխ մընօկը պօպիլ: Նենը, ըսկաղըվըս, ի դամ թուրքի նետ»⁶⁸: («Իսկ այժմ սուրհանդակներ եկան Երևանից, հաբցոինք՝ ի՞նչ տեղեկություններ կան: Ասացին, որ յոթը հարյուր հոգի եկել են դեսպանի հետ, չենք իմանում, մերոնցի՞ց է, թե թագավորի որդի Շահնավազ խանի մարդն է: Նրա անունը Դավիթ բեկ է: Նա ապրում է Ղափանում: Տեղացի հայերին հավաքել է իր շուրջը: Թուրքերը եկել են, կոխվ է տվել և նրանցից շատերին կոտորել է: Այժմ, ասում են, այնտեղ ալլևս քուրճեք չկան» (ընդգծումը մերն է — Ա. Ա.):

Ղարաբաղի երկու կաթողիկոսների և մի խումբ մելիքների 1725 թ. հուլիսի 26-ին Եկատերինա I-ին ուղարկած գրությունից երևում է, որ Սյունիքում հայ հայրենասերները ամրացել են իրենց բերդերում և հաջողությամբ կարողանում են երկիրը պաշտպանել թուրքական հարձակումներից. «...այս երկիրս սարով և տեղով շատ ամուր են, և մեք այս խալիզս ամէնքն իւր երկրումն սըղնաղ, սղնաղ եմք արել ամուր տեղերն, և ամէնքս մէկ սղնաղին վերա նստած

⁶⁵ Վենետիկի B ձեռագիր, էջ 20:

⁶⁶ АВПР, ф. СРП, 1725. д. 5, л. 335 (Հմմտ. Վ. Մ. Մարտիրոսյան, Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պայքարում, Երևան, 1971, էջ 173:)

⁶⁷ «Ընտիր պատմութիւն», էջ 45—46:

⁶⁸ Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 226:

պահում եմք»⁶⁹։ Ինքնապաշտպանություն կազմակերպած այդ երկրամասերի թվում հիշվում է նաև Ղափանը։

* * *

Նոր իրադրության մեջ Դավիթ բեկը ցանկացել է բարելավել հայ-պարսկական փոխհարաբերությունները և դաշն կնքել շահ Թահմազի հետ։ Դրանում շահագրգռված էին նաև պարսիկները, որովհետև թուրքական զորքերը խուժել էին Պարսկաստան և օգտվելով աֆղանների Պարսկաստանում ստեղծած ծանր վիճակից, սկսել էին նվաճել Պարսկաստանի հյուսիսային շրջանները։ Դավիթ բեկը, ցանկանալով ցույց տալ թուրքական բանակի դեմ սյունեցիների տարած հաղթանակները, կոչում սպանված թուրք զինվորների շորս ձիաբեռ գլուխ է ուղարկում շահ Թահմազին։ Իսկ շահ Թահմազը, ցանկանալով խրախուսել սյունեցիների կռիվները օսմանցիների դեմ, դաշն է կնքում Դավիթ բեկի հետ, շնորհագիր է ուղարկում և ճանաչում է նրան Սյունիքի ղեկավար, դրամ կտրելու իրավունք է տալիս, նվերներ ուղարկում և այլն⁷⁰։

«Ընտիր պատմության» մեջ բերված է շահ Թահմազի՝ Դավիթ բեկին ուղարկած հետևյալ շնորհագիրը. «Շահ-Թամազ արքայ Պարսից առ քաջդ Դավիթ բեգ և առ քաջ զօրավարսդ Հայոց, որք ընդ քեզ են՝ ողջոյն. ի բազմաց բազում անգամ ադդ եղև մեզ՝ զբաջութեանց քոց, բայց արդ՝ իբր ականատես իսկ եղեալ մեր զձերոց մեծամեծ քաջութեանց, որ ընդ դէմ թշնամեաց մերոց։ Ահա՛ արդ կացուցի զքեզ այսօր իշխանն, և գլուխ ամենայն իշխանաց մերոց. որք են ի կողմանսդ յայդոսիկ. և երկիրդ խափանու՝ զոր կալար քաջութեամբ, քեզ լիցի։ Բայց դու ելցես, և ժողովեցես առ քեզ զամենայն զօրս, և զխանս ի կողմանցդ այդոցիկ, և ի բաց հանցես զօսմանցին ի սահմանաց քոց»⁷¹։

Ինչպիսի խմբագրության էլ ենթարկված լինի այս շնորհագիրը հայ հեղինակների կողմից, այնուամենայնիվ փաստ է, որ ստեղծված իրադրության մեջ հայերը և պարսիկները, կոչվելով օսմանցիների դեմ, հանդես էին գալիս ղեկավար զործակցությամբ։

Ըստ «Ընտիր պատմության» Գյուլամիրյանցի հրատարակության, այդ դաշնակցությունը տեղի է ունեցել 1727 թ.։ Ղուկաս Սեբաստացու նախագահությամբ օրինակում այդ թվականը բացակայում է և պարզվում է, որ «Ընտիր պատմության» խմբագրված օրինակում մոծվել է սխալ հաշվումով։ Շահ Թահմազի և Դավթի ղեկավար գործակցությունը տեղի է ունեցել թուրքական բանակի կողմից Թավրիզը գրավելուց առաջ։

Այդ նույն թվականին Ազուլիսի մոտ տեղի ունեցող մի ճակատամարտում, երբ, հայերի հետ դաշնակցած, թուրքերի դեմ կոչվում են նաև շահ Թահմազի զորքերը, «Ընտիր պատմության» մեջ ասվում է, որ պարսկական զորքերը նահանջել են Թավրիզ, երբ դեռ թուրքական բանակը չէր գրավել Թավրիզը։ Հայտնի է, որ թուրք զորքերը Թավրիզը գրաված են եղել 1725 թ. հուլիս-օգոստոս ամիսներին տեղի ունեցած կատաղի մարտերից հետո, ուստի շահ Թահմազի և Դավթ բեկի դաշինքը պետք է եղած լինի 1725 թ. ամռան ամիսներին։

⁶⁹ Эзов, Сношения..., էջ 421—422.

⁷⁰ «Ընտիր պատմություն», էջ 58.

⁷¹ Նույն տեղում, էջ 59.

* * *

Դավիթ բեկի մահը, ըստ «Ընտիր պատմութեան» մեջ հաղորդված տեղեկության, տեղի է ունեցել 1728 թ. «Եւ եղև ի ժամանակին յայնմիկ, — կարդում ենք այնտեղ, — հիւանդանալ Դաւթի, և մեռանել իսկ խաղաղութեամբ ի տան իւրում ի Հալիձոր, յամի տեառն 1728 և ի թուականութեանն Հայոց 1177, կացեալ ամս վեց յիշխանութեան իւրում ի հափան»⁷²:

Ղուկաս Սեբաստացու նախագաղափար օրինակում Դավիթ բեկի մահվան տարեթվի մասին տեղեկությունը այլ է: Այնտեղ ասված է. «Եւ ի ժամանակի յայնմիկ մեռաւ Դաւթ պէկն խաղաղութեամբ ի տան իւրում յամի տեառն 1728 [28-ը մատիտով ավելացված] և ի թուին Հայոց ՌՃՀէ [Հէ մատիտով] ի յամսեան [ամսաթվի տեղը բաց թողած]»⁷³: Տարին ու ամսաթիվը մնացել են թերի: Այսպիսով պարզվում է, որ Դավիթ բեկի մասին պատմագրողը հաստատ չի իմացել Դավիթ բեկի մահվան ո՛չ տարին, և ո՛չ ամսաթիվը, հետևապէս Սեբաստացու նախագաղափար օրինակի վրա խմբագրված ձեռագրերը, որոնցից ծագում է Գյուլամիրյանցի հրատարակության բնագիրը, մահվան թվականի մասին եղած տարեթիվը մեզ հաստատուն կովան ծառայել չեն կարող:

Այժմ, երբ խախտված է «Ընտիր պատմութեան» մեջ Դավիթ բեկի մահվան մեղ հայտնի և բաղաբացիություն ստացած թվականը, ավելի հավանական է դառնում այն ուսումնասիրողների հայտնած կարծիքը, որոնք, հիմնվելով Մխիթար Սպարապետի և Սյունիքի մյուս զինվորականների 1726 թ. մարտի 24-ի ուսական արքունիք ուղարկած գրության վրա, որի տակ բացակայում է Դավիթ բեկի անունը, գտնում են, որ այդ գրությունն ուղարկելուց առաջ Դավիթ բեկը մահացած է եղել: 1726 թ. գարնանը, ինչպես երևում է այդ գրությունից, սյունեցիները գերմարդկային ճիգեր էին թափում Սյունիքը օսմանցիներից պաշտպանելու համար: Այդ գրությամբ նրանք արքունիքից օգնություն են խնդրել. «Եւ մեր Աստուծոյ զօրութիւնն ապաւինեցար, և յուսացար աթոռ թագաւորութիւնդ քոյ, և ակն ունելով ձերում իշխանութիւնն և յԱստուծոյ յօդնութիւնն, սպառազինեալ պատերազմեցար յետ օսմանցոց, Աստուծով, յաղթեցար նո՛ւ և պաղում գիրիք ևս ազատեցար: Եւ այժմս օսմանցիք բազմացեալ եկեալ են շորս կողմանէ մեզ պատեալ, գեղորանքն առել են ընդ մեզ պատերազմում, զի ոչ եմք կարում աստր և անդոն շրջել, այլ մնացեալ եմք ի մէջ զալին, որպէս հաւքն ի մէջ զափազի»⁷⁴:

Այս խնդրագրի տակ ստորագրել են Մխիթար Սպարապետը և վեց զորահրամանատարներ, բայց բացակայում է Դավիթ բեկի անունը և ստորագրությունը: Անկարելի է, որ Դավիթ բեկը, եթե կենդանի լիներ, չստորագրեր այդ փաստաթղթի տակ: Հիմք ունենալով այդ, պետք է ընդունել, որ 1726 թ. գարնանը Դավիթ բեկն արդեն մահացած էր:

Այդ իրողության օգտին է խոսում նաև Կրուշինսկու հետևյալ տեղեկությունը. «Իսկ 1726 թ., երբ Մխիթարը երկրում իշխան ընտրվեց և մեռոնով մեկիր օծվեց, հայերը հաջողությամբ աղետաբեր հարվածներ հասցրին թուր-

⁷² Նույն տեղում, էջ 67—68:

⁷³ Վենետիկի Ա ձեռագիր, էջ 27:

⁷⁴ П. А р у т ю н я н, Послание Мхитар-бека русскому правительству (տե՛ս Հայկական ՄՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1952, № 3, էջ 83—99):

12 Հանդես, № 4

քերին»⁷⁵։ Դավիթ բեկի կենդանության պարագային, հասկանալի է, Մխիթար Սպարապետը ղորահրամանատար օծվել չէր կարող։

«Ընտիր պատմութեան» համաձայն, Դավիթ բեկը մահացել է իր բնական մահով. «Եւ եղև ի ժամանակին յայնմիկ հիւանդացեալ Դաւիթ, և մեռեալ իսկ խաղաղութեամբ ի տան իւրում ի Հալիձոր»⁷⁶։ Նույնն է ասված Վենետիկի ինչպես Ա (էջ 27), այնպես և B ձեռագրերում (էջ 31)։

Թվում է, թե Շահումյանցը իր ղորահրամանատարի մահվան պարագան շփոթել չէր կարող։ Բայց մեզ է հասել մի կարևոր հիշատակարան՝ գրված Դավիթ բեկի աներձագի՝ Թաղի Կուզանովի կողմից Աստրախանում 1746 թ., որի մեջ հայտնվում է, որ Դավիթ բեկը, ինչպես և Թաղիի եղբայր Աբղլմասեհը, զոհվել են պատերազմում. «...մեր միւս եղբայր Աբղլմասեհն որ Վրաստան պարոնի հրամանաւն զնաղին տեղն ղօրաժողով ունելոյ, որ եղբայրս էլ ղօրապետ էր, որոց գլխաւորն էր Ալիխանի որդի Դաւութ պէկն, որ է իմ փեսայ, որք ընդ պարսից և օսմանցոց բաղում պատերազմունս ետուն, և ի վախճանի անկան ի մարտին, որ իմ եղբօր գերեզմանն այժմ ի խոտի է, ի Ղափանումն, ի խոտի...»⁷⁷։

Այս երկու հակասական տեղեկություններից մեզ ավելի հավանական է երևում Թաղի Կուզանովի տեղեկությունը, որը չէր կարող շփոթել իր եղբայր Աբղլմասեհի և իր փեսա Դավիթ բեկի Սյունիքի կռիվներում զոհվելու փաստը։ Դավիթ բեկը, հավանական է, զոհվել է 1726 թ. գարնանը թուրք ղավթիչների դեմ մղած ճակատամարտերից մեկում։

* * *

Անհրաժեշտ է նաև վերանայել Մխիթար Սպարապետի սպանության թվականը, որը քաղաքացիություն է ստացել 1730 թ. տակ։ Դրա համար հիմք է ծառայել «Ընտիր պատմութեան» մեջ հաղորդվող հետևյալ տեղեկությունը. «Եւ անդ յիւրոցն հարեալ թոփով մեռանէր (Մխիթարն) յամի տեառն 1730, յետ երկուց ամաց իշխելոյն» (էջ 71)։

Պարզվում է, որ Մխիթարի մահվան թվականը Սեբաստացու նախագահադատար օրինակում բացակայում է։ Այն, անշուշտ, հետսամուտ է։

Ժամանակին սխալ է վերծանված հղել Մխիթար Սպարապետի տապանաքարի արձանագրության մեջ հիշված մահվան թվականը։ Հավանական է, հրատարակչի մոտ ցանկություն է եղել այն համաձայնեցնել «Ընտիր պատմութեան» տարեթվի հետ։ Հանգուցյալ Ս. Բարխուդարյանը հրատարակել է տապանաքարի արձանագրությունը, որից պարզ երևում է, որ Մխիթար Սպարապետը մահացել է ոչ թե 1730 թ., այլ՝ 1727-ին⁷⁸։ Սյունիքի ղինված ուժերը նա ղեկավարել է երկու տարի։

⁷⁵ Ա. շ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Դավիթ բեկի զխաղաղած Ղափանի ապստամբությունը, էջ 106—107։

⁷⁶ «Ընտիր պատմութեան», էջ 68։

⁷⁷ Մ Ե ս ր օ պ ա ր ք ե պ ի ս կ օ պ օ ս, Զաքարիա նկարչի ձեռագիրը և Դավիթ բեկի մասին հիշատակարանը, էջ 136։

⁷⁸ Ս. Բ ար խ ո ղ ար յ ա ն, Հայ վիճագրություն, 11, Երևան, 1960, էջ 64։

* * *

Այսպիսով, Սյունիքի ազատագրական շարժումների մասին կատարված ուսումնասիրության հիման վրա կարելի է առաջարկել հետևյալ ժամանակագրական ցանկը:

1722 թ.— Դավիթ բեկը գալիս է Սյունիք:

1723 թ. ապրիլի 14-ին տեղի է ունենում Չարաբերդի ճակատամարտը:

1724 թ. ապրիլի 9-ին Ղարաբաղի հայկական զորաբանակը օգնության է գալիս Սյունիքին:

1724 թ. ամռանը Պյոտր I-ի պատվիրակ Իվան Կարապետը գալիս է Սյունիք:

1725 թ. փետրվարի 20-ին թուրքական զորքերը հարձակվում են Սյունիքի վրա:

1725 թ. փետրվարի 20—26-ը տեղի է ունենում Հալիձորի ճակատամարտը:

1726 թ. գարնանը տեղի է ունեցել Դավիթ բեկի մահը և Մխիթարի զորահրամանատար նշանակվելը:

1727 թ.— Մխիթար Սպարապետի սպանությունը:

Գյուլամիրյանցի հրապարակած բնագրում նկատվում են մի շարք աղանդատումներ՝ կրճատումներ, ընդմիջարկություններ, հատուկ անունների փոփոխություններ և այլն: Նկատի ունենալով, որ այժմ գիտական շրջանառության մեջ է գտնվում Գյուլամիրյանցի հրատարակությունը, ուստի անհրաժեշտ ենք համարում կանգ առնել նրա մի քանի թերությունների վրա՝ ուղղելով նրանք վեներտիկի Մխիթարյանների մատենադարանի երկու ձեռագրերի տարբերակներով, որոնցից մեկը՝ A-ն, Ղուկաս Սեբաստացու ինքնագիր ձեռագիրն է. իսկ մյուսը՝ B-ն, Գյուլամիրյանցի հրատարակած բնագրի հնագույն ընդօրինակությունը:

Գյուլամ. հրատ., էջ 2, տող 23. «Յամին հազարերորդի եօթանասներորդի առաջներորդի Հայկազեան թուականի, յորժամ լուան բնակիչը Եօթնաբերդ գաւառին հափանու զասպատակն, և ել աւերումն Գեանջայու և Շամախու, Հայք և Պարսիկք առ հասարակ խռովեցան...»: Խոսքը վերաբերում է 1722 թ. լեզգիների Անդրկովկասում կատարած ասպատակություններին: Թվականը բացահայտ սխալ է. հայկական 1071 թվականը հավասար է 1622-ի (1071+551=1622), այնինչ լեզգիների արշավանքը դեպի Անդրկովկաս տեղի է ունեցել 1722 թ.: Վեներտիկի A ձեռագիրն ուղղում է. «Յամին 1171 Հայկազեան թուականի, յորժամ լուան բնակիչը Եօթնաբերդեան գաւառին հափանու զասպատակն և պաւերումն Գանչու և Շամախու, Հայք և Պարսիկք առհասարակ խռովեցան» (էջ 1): 1171-ին գումարելով 551, ստանում ենք ճիշտ թվականը՝ 1722:

էջ 4, տող 9. «Իսկ եթէ որով մարթասցի զհայեցութեամբ իւր առաջի իշխանաց իշխանին արժանաւոր ցուցանել, խորհեցաւ գիրս յանուն յիսուն արանց տանուտէրանց հափանու յօրինել...»: Խոսքը վերաբերում է Ստեփանոս Շահումյանցի՝ Շահնավազ խանին ներկայացրած գրությունը: Գյուլամիրյանցի հրատարակած ձեռագրի խմբին պատկանող ընդօրինակություններում հանդիպում է ոչ թե «...խորհեցաւ գիրս... յօրինել», այլ «...խորհեցաւ սուտ գիրս... յօրինել»: Գյուլամիրյանցը, ըստ երևույթին, անհարմար համարելով, «սուտ»

բառը դուրս է թողել նախադասությունից: Այն ունի Վենետիկի B ձեռագիրը (էջ 2):

էջ 5, տող 20—23. «...բանակեցաւ ի սահմանս Սիսական գաւառին, ի պեղեցիկ զաշտավայրի անդ, մերձ ի բլուրսն Երեք-գագաթեան, որ ի յայտատեղից կոչի Ուշթեփէ»: Խոսքը վերաբերում է Դավիթ բեկի Սիսական գալիս Ուշթեփեում գտնվելուն: Վենետիկի A ձեռագիրը չունի «մերձ ի բլուրս» բառերը, և այդ ձիշտ է, որովհետև նշված զաշտավայրը գտնվում է ոչ թե Ուշթեփեի մոտակայքում, այլ հենց Ուշթեփեի երեք բլուրների միջև:

էջ 6, տող 21—22. «Եւ կոչեալ առ ինքն զԱռաջնորդն Տաթևու, պատմեաց նմա, թէ յի՞նչ բանս, յի՞նչ խորհուրդս եկեալ է...»: Խոսքը Դավիթ բեկի Սյունիք գալուց հետո Տաթևի վանահորն իր մոտ կանչելուն է վերաբերում: Ո՞վ է եղել այդ ժամանակ Տաթևի վանահայրը. Գյուլամիրյանցի խմբի ձեռագրերում անուն չի երևում: Վենետիկի A ձեռագրում հիշվում է երկու հոգևորականի անուն՝ «Կիրակոս վարդապետն և Դաբրիել վարդապետն» (էջ 14): Ըստ որում, Սեբաստացու այդ բնագրից երևում է, որ Դավիթ բեկը իր գալու նպատակը հայտնելու համար իր մոտ է կանչում ո՛չ միայն Տաթևի վանահորը, այլև «զարսն տեղւոյն», անշուշտ՝ տեղացի աչքի ընկնող մարդկանց:

էջ 15, տող 6—8. Երկրորդ գլխի վերնագիրը «Թէ զորչա՞փ ինչ առաւ Թարսս զօրապետն: Եւ քէ ո՞րպիսի պատեւազմունի՞ եղեն ի կողմանս Չավնդոյ և Մեղրոյ» չունի Վենետիկի B ձեռագիրը:

էջ 17, տող 3—7. «...Իսկ բնակիչքն իբրև զայն լսէին, հարիւր յիսուն վառեալ ի Յիզկեստոյ առաքէին, երթալ, կայնուլ զանցս ճանապարհին...»: Վենետիկի B ձեռագրում «Յիզկեստոյ» գյուղանունն ուղղված է «Յիշկեստոյ» ձևով: Ղ. Ալիշանն այդ անունը նույնացնում է Շեշկերտի հետ (Ղ. Ալիշան, Սիսական, էջ 300):

էջ 17, տող 18—21. «Բայց ի հետեւեալ ատուրն Սափի Ղուլին Լեաղեան երեք հարիւր սպառազէն արամբ՝ նենգութեամբ գայ, բանակի ի Զափնիս...»: Վենետիկի B ձեռագիրը «Զափնիս» տեղանունը տալիս է Ափկին ձևով (էջ 8): Վենետիկի A ձեռագիրը ունի «գայ բանակի «...յԱփկու վանքին» (էջ 5):

էջ 19, տող 20. «...խաղացուցանէ ի յՕրդուվար»: «Օրդուվար» [Օրդուբաղ] անունը այդպիսի ձևով է հիշված այլ էջերում ևս: Բոլոր ձեռագրերն ունեն «Ուրդուվար» կամ «Ուրդուվար» ձևը:

էջ 19, տող 20—22. «...և մնացին միայն շորք գլուղք թուրքաց և կողմանս Արձանաբարին»: Վենետիկի A ձեռագրում հանդիպում է «Արձաւաբարին» ձևով (էջ 6):

էջ 19, տող 23—24. «Եւ հրամայեաց Պապ երթալ կոտորել զնոսա. և եկին հարին զերիս զիւղսն...»: Ի՞նչ գյուղեր են եղել դրանք, Գյուլամիրյանցի բնագրում ոչինչ չի ասվում: Վենետիկի A ձեռագրում տրվում են այդ գյուղերի անունները՝ Դամլի, Շրդի և Պեթենա (էջ 6):

էջ 20, տող 21—24. «Հրաման տայր նաև Պապայ զօրապետին երթալ ի Լեաղու ձորն, և եթէ գտանիցէ անդէն մնացեալ շէն ինչ թուրքաց, կոտորեսցէ: [Եւ ըստ հրամանի նորա եւ զնաց հազար հինգ հարիւրով Պապ ի Լեաղու ձորն, և զոչ եզիտ ի թուրքաց, զի սակաւ ոմանք մնացեալ էին]: Քառակուսի փակագծի մեջ առնված նախադասությունը դուրս է մնացել Գյուլամիրյանցի հրատարակած բնագրից, այն ունի Վենետիկի B ձեռագիրը (էջ 10):

էջ 21, տող 9—10. «...և առեալ զամենայն ինչս նոցա [և դառնայ ի տեղի իւր բազում գանձիւք և աւարաւ, զի ոչ միայն ի Լեւոնու ի գիւղօրէիցն թուրքաց. այլև ի կողմանցն Վայրիվարայի Հայոց]»: Քառակուսի փակագծի մեջ առնված նախադասութիւնը դուրս է մնացել Գյուլամիրյանցի հրատարակած բնագրից, այն ունի Վենետիկի B ձեռագիրը (էջ 10):

էջ 23, տող 10. «...և ոչինչ փոյթ եղև նմա լինելն անհաւատարիմ, նենգաւոր, թշնամի Աստուծոյ իւրոյ [մարդկան և ազգին իւրոյ]»: Քառակուսի փակագծի մեջ առնվածը դուրս է մնացել Գյուլամիրյանցի հրատարակած բնագրից. այն պահպանել է Վենետիկի B ձեռագիրը (էջ 11):

էջ 23, տող 16—18. «Եւ հաւատայ Թորոս բանից նորա, և ել գնաց միամըտութեամբ և եհաս ի յԵղեվարդ...»: Տեղանունն աղավաղված է. Վենետիկի B ձեռագիրը տալիս է «յԵղահորդ» ձևը: Արիշանը չի շտ է համարում «Աղահորդ» ձևը (Ղ. Արիշան, Սիսական, 101):

էջ 24, տող 20—24. «Ահա զայսպիսի մեծ անօրէնութիւն գործեաց Փռանգիւն, և ոչ այսչափ միայն, այլ և առաւել հաճոյանալոյ վասն Սուլթանին՝ [թէ ոչ է միտեալ զկնի Դաւթի և զօրականացն խափանցւոց]...»: Քառակուսի փակագծի տողը դուրս է մնացել հրատարակութիւնից: Ունի Վենետիկի B ձեռագիրը (էջ 12):

էջ 25, տող 18—21. «...երկու զօրավարք ապստամբեցան ի Պապայ վասն խռովութեան ինչ եղելոց ի մէջ: Եւ եկեալ ի Լեզկին աւանն զօրաժողով եղեն...»: Ավանի անունն աղավաղված է. Վենետիկի B ձեռագիրն ունի «ի Լեջքին» (12):

էջ 26, տող 16—17. «...ի Կալերու մինչև ցՄանլև, և մինչև ցԱքիս...»: «Աքիս» տեղանունն աղավաղված է. Վենետիկի B ձեռագիրն ունի «Ափքիս» ձևով (էջ 12):

էջ 27, տող 18—20. «Եւ եմուտ Դաւիթ ի Դաշտուն, և սկսաւ բարկանալ յոյժ ի վերայ Պապայ [մանաւանդ զի այլք ևս չարախօսեալ լինէին զՊապայ]»: Հրատարակութեան մեջ քառակուսի փակագծի մեջ վերցրած տողը դուրս է մնացել: Գյուլամիրյանցը, ըստ երևույթին, անպատշաճ համարելով Պապի վրա արած չարախոսութիւնը, փակագծի մեջ վերցրած նախադասութիւնը դուրս է թողել իր հրատարակած բնագրից: Ունի Վենետիկի B ձեռագիրը (էջ 13):

էջ 28, տող 22: Գյուլամիրյանցի բնագրում Մեղրի գետի անունը Վենետիկի B ձեռագրում հանդիպում է «Ղօղղօղ» ձևով (էջ 13):

էջ 42, տող 1—6: Գյուլամիրյանցի հրատարակութեան երկրորդ զուխը. «Թէ զիա՞րդ օսմանցին եկն, և եմուտ ի խափան: Եւ քէ զո՞րքան մարտս պատերազմաց ետուն ընդ նոսա Դաւիթ և քաջ զօրականք նորա: Եւ քէ զո՞րքան մեծամեծ յաղքութիւն արարին ի նոսա» բացակայում է Վենետիկի B ձեռագրից:

էջ 48, տող 19—22. «...և առհասարակ յերկոցունց կողմանց ձայն փողոյ, և ձայն թմբկաց, գոչին զօրաց... զականջս խլացուցանէին»: Վենետիկի B ձեռագրում «ձայն թմբկաց»-ի փոխարեն գործ է ածված «ձայն գօսերաց» (թըմբուկի պարսկական անվանումով, էջ 25):

էջ 52, տող 3—6. «...և ի նմին անկան ի բանակէ Օսմանցւոցն երկոտասան հազար այր (12000) պատերազմող»: Վենետիկի B ձեռագրում պատերազմում ընկնողներին թիվը հաշված է 13000 հոգի (էջ 24):

էջ 54, տող 8—10. «Եւ իբրև ընդ երեկս լինէր, Մխիթար սպարապետն և տէր Աւետիսն խանիցն պարսից ազդ առնէին, թէ ի դիշերիս յայսմիկ հարկա-

նելոց ենք մենք Մեղրի...»: Վենետիկի Ե ձեռագրում նշված է, որ «ազդ առնող» խանր հանդիսացել է Դուղալի խանը (էջ 24)։

էջ 55, տող 10—14. «Յայնժամ Մխիթար սպարապետն և տէր Աւետիսն, և որք ընդ նոսա էին, սուսերամերկք լինին, ի մէջ բերդին յարձակէին, զհարկահանան օսմանցւոց անդանօր սատակէին [ապա որում և պատահէին զօրացն օսմանցւոց անդանօր սատակէին]»։ Ըստ Վենետիկի Ե ձեռագրի, սպանվող հարկահանը մի հոգի է եղել։ Փակագծի մեջ առնված նախադասութիւնը Գյուլամիրյանցի հրատարակութեան մեջ բացակայում է, ունի Վենետիկի Ե ձեռագիրը (էջ 33)։

էջ 63, տող 11—13. «Ապա յետ երկուց աւուրց եկին հասին բազմութիւն զօրացն օսմանցւոց և լցին զղաշտն Մարադու և անդ բաժանեցին յերիս առաջս, [Իսկ որք ընդ Դաւիթ էին, նորա ևս] յերկիս առաջս բաժանեցան»։ Փակագծի մեջ առնված նախադասութիւնը պակասում է Գյուլամիրյանցի հրատարակութեան մեջ, ունի Վենետիկի Ե ձեռագիրը։

էջ 69, տող 20—24 և էջ 70, տող 1—2. «(Տէր Աւետիսն— Ա. Ա.) ...զնացեալ բնակեցաւ յծրուսաղէմ. և յետ բազում ապաշխատանաց էառ զներումն ի Սրբազան Պատրիարքէն Հայոց, հաճութեամբ և համաձայնութեամբ տէր Աբրահամ սրբազնագոյն կաթողիկոսի ամենայն Հայոց»։ Ըստ Վենետիկի Ե ձեռագրի Տէր Ավետիքը գնում է ոչ թե Երուսաղեմ, այլ Հոռմ. «...առեալ զընտանիս իւր բնակեցաւ ի Գաղատիայ։ Եւ էառ զներումն ի սրբազան Հայրապետին Հոռմայ» (էջ 31—32)։

էջ 73, տող 16. Հրատարակված բնագրում $1 \frac{3}{4}$ տողի չափով ցաքական

գրաբնիչը կրճատել է։ Կրճատված մասում հեղինակը խորհրդածում է, թե ինչ պատճառով է եղել հայ ժողովրդի կործանումը։ «Ընդէր եղև ի կործանումն աղ-գին մերոյ և թագաւորութիւնն, վասն զի բարձաւ միաբանութիւնն ի յիշխանաց և ի նախարարաց մերոց»։ Ցարական արքունիքն առաջնորդվում էր «բաժանիր և տիրիր» սկզբունքով, հասկանալի է, որ նրա գրաբնիչը անթույլատրելի պիտի համարեր հեղինակի խորհրդածութիւնը։

էջ 74, տող 3—7. «Արդ՝ ողորմեցաւ արդարև Աստուած ամենայն տանն Սիսակայ որդւոցն Գեղամայ ի յայսպիսի դառն ժամանակի, (յուրում տագնապէին ամենայն բնակիչք Հայաստանեայց յերեսաց հանապազօր սրոյ, սովու, գերութեան և լկանաց), յուրացնելով նոցա զԴաւիթ բէկն...»։ Նախադասութեան ընդգծված մասը բացակայում է Վենետիկի Ե ձեռագրում և, հավանական է, հրատարակչի ավելացրածն է (էջ 33)։

էջ 74, տող 17—21. «...Մեռաւ Դաւիթ... և յաջորդեաց Մխիթարն [վերջին մխիթարին Հայոց]»։ Փակագծի բառերը բացակայում են Վենետիկի Ե ձեռագրում (էջ 33)։

էջ 71, տող 1—2. «Այլ Մխիթարն փախուցեալ ի նոցանէ երթայր վերստին զօրաժողով լինէր, զզօրս օսմանցւոց խորտակէր»։ Ուշադրավ է, որ ըստ Վենետիկի Ե ձեռագրի, Մխիթարը զորք է հավաքում ինչպես հայերից, այնպես և ադրբեջանցիներից. «...զօրաժողով լինէր ի Հայոց և ի թուրքաց, զզօրսն օսմանցւոց խորտակեր»։ Ընդգծված բառերը կրճատված են Գյուլամիրյանցի մոտ» (էջ 33)։ Այդ տարիներին օսմանյան բանակի դեմ հայ և ադրբեջանցի ժողովուրդների համատեղ կռիւն մի շարք փաստեր են հայտնի։

էջ 75, տող 17. «...որք մինչև ցայժմ մնացին» բառերից հետո ցարական գրաբնությունը Գյուլամիրյանցի հրատարակած բնագրից կրճատել է հետևյալ նախադասությունը. «Եւ [Հայք] եղեն ստրուկ կամաւ ստրուկ այլազգեաց, որպէս և յառաջն, որք մինչև ցայժմ մնացին ի յիշխանութեան իւրեանց»:

էջ 76, տող 10—11. «Դաւիթ և ամենայն զօրավարք իւր էին ի յազգէն Հայոցս լուսաւորչական»: Վենետիկի Բ ձեռագրում «Լուսաւորչական» բառը բացակայում է (էջ 34):

էջ 77, տող 7—8. «Տէր Աւետիսն... հեռացեալ ի հայրենի երկրէն պանդխտեցաւ յԵրուսաղէմ...»: Վենետիկի Բ ձեռագրում Տէր Աւետիսը «պանդխտում է» ոչ թե Երուսաղէմ, այլ Ֆրանսիա. («պանդխտեցաւ ի Գաղատիա» (էջ 35):

Կարելի է մատնացույց անել այլ տարրնթերցումներ ևս, բայց բերված օրինակները, կարծում ենք, բավական են անհրաժեշտ համարելու Ղուկաս Սեբաստացու «Ընտիր պատմութեան» գիտական համեմատական բնագրի հրատարակությունը:

К ВОПРОСУ ОБ ОСВОБОДИТЕЛЬНОМ ДВИЖЕНИИ СЮНИКА В XVIII ВЕКЕ

А. Г. АБРАМЯН

(Резюме)

Освободительное движение Сюника в 1722—1728 гг. представляет собой одну из славных страниц в истории народно-освободительных движений армянского народа. Горские сюнийцы, вдохновленные южным походом Петра I и его обещаниями помочь армянскому народу в освобождении от иноземных поработителей, под руководством народного героя Давид-бека вели на протяжении многих лет победную освободительную войну.

Основным источником истории сюнийского движения является «Избранная история Давид-бека». Она написана мхитаристом Гукасом Себастици под диктовку непосредственного участника сюнийского движения, полководца Давид-бека—Степаноса Шаумянца. Рукопись дошла до нас в шести списках, сохранившихся в разных рукописных коллекциях (Венеции, Ленинграда, Матенадарана и др.).

«Избранная история Давид-бека» опубликована арменоведом Гюлампрянцом в Эчмиадзине в 1871 г. и переведена на французский язык академиком Броссе в 1876 г. Критический разбор этой книги, проделанный некоторыми исследователями (Н. Адонц, Лео и др.), выяснил ряд искажений: интерполяция, сокращение, анахронизм и т. д. Недавно в библиотеке Мхитаристов в Венеции был выявлен первоначальный вариант этого источника, послужившего основой известных нам рукописных списков.

В архивах Москвы и Еревана были обнаружены ценные документы по истории сюнийского движения, которые во многом помогли прове-

рить сведения «Избранной истории Давид-бека» и внести некоторые поправки в текст эчмиадзинского издания.

В данной статье на основании нововыявленного варианта «Избранной истории» и архивных данных делается попытка уточнить некоторые спорные вопросы истории освободительного движения в Сюнике. В статье делается ряд уточнений в биографии Давид-бека: оказывается, что предки Давид-бека являлись сюнийцами из местности Али-дзор; они переселились в Гегаркунийский район, а оттуда—в Тифлис. Здесь Давид-бек поступил на военную службу к сыну грузинского царя Вахтанга VI Бакару и в 1722 г. был приглашен в Сюник, чтобы руководить военными операциями повстанцев.

Утверждается, что Чарабердское сражение имело место 14 апреля 1723 г., армия карабахских армян пришла на помощь сюнийцам в начале апреля 1724 г., нападение турецких войск на Сюник происходило не в 1726 г., а 20 февраля 1725 г., смерть Давид-бека произошла не в 1728 г., а весной 1726 г., убийство Мхитара Спарапета произошло не в 1730 г., а в 1727 г. и т. д. Высказывается пожелание составить сравнительный научный текст «Избранной истории».